

Հայոց հա Հայոց ազգի ազգական
Հայոց հա Հայոց ազգական

Հրատարակութիւն Զ. Գրիգորեանցի Կովկասանի Գրադանա.

ՎԱՆԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԱՅ

ԵՐԱՆԱ ԿԵՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԱՐ ԱՉԱԲՈՐ ԱՍԻԱՑԻ
ՊՈԼՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԾ

Խոսկարակ պրօֆեսոր Ք. Պատկանեանի բառերն
երկասիրութիւնից

ԳԱՅ. ԵԱՂՈՒԹԵԱՆ.

ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ Ա. ՎԱՐԴԱԿԵԱՆԻ ԵՒ ԲՆԿ.

1883

902.6(47.925) + 491.99-72

Հրատարակութիւն Զ. Գրիգորեանցի Կովկասեան Գրադարանանոցի

9(47.925)

Արմա.

Վ Ե Ն Ի

491.99-72

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԵՐԸ

ԵՒ

ՆԲԱՆՑ ՆԸՆՆԿԱՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԱԿԱՐ ԱՍԻԱՅԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ՀԱՄԱՐ

A $\frac{\pi}{34064}$

ՕՏԱԿԱՔԱԴ պրօֆէսօր Վ. Պատկանեանի ըռտ-
սերէն երկասիրութիւնից

ԳԱԱ. ԵԱՂՈՒԹԵԱՆ:

Թ Ի Ֆ Լ Ի Ա

ՏՊԵՐԵԱՆ Մ. ՎԱՐԴԱՆՆԵՍՆԻ ԵԽ ԸՆԿ.

1883



ДОЗОР
ПРИКАЗА ПРОВІДНОГО
ЗАЩИФРОВАНІЙ ВАРИАНТ

Доз. Цензурою. Тифлісъ, 5-го Мая, 1883 года.
Тип. М. Вартаняца и К°, на Тройц. цер. д. № 11.

ՊԱՆԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԵՐԸ

եւ

ՆՐԱՆՑ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՋԱԿԱՐ ԱՍԻԱՅԻ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ:

Քանի որ դեռ Եւրոպայի երեք քառորդը ծածկուած էր անտառներով, ցանցառակի բնակեցեալ անյալտ ազգերից, աւելի ևս վաղ քան Կիւրոս պարսից թագաւորութիւնը հիմնեց, երբ Յունաստանում կարգաւորվում էին Օլիմպիական խաղերը և տեղում էին Մեսսինեան պատերազմները, իսկ Հոռոմում թագաւորում էին Հռոմուլոս և Նումա Պօմպիլիոսը, եթէ իրօք սրանք թագաւորել են երբ և իցե, — ահա ալս հեռագոյն պատմական տարեթւում Վանի ժայռերի վրա և Հայաստանի զանազան տեղերում մի անյալտ ազգ քանդակում էր արձանագրեր, որք պահպանուել են և մինչև այժմ, որպէս մի առեղծանելիկ գցած հնութիւնից մեր ժամանակին լուծելու համար:

Այս արձանագրեր թողնողը Բնչ ազգ էր: Ի՞նչ լեզուով: Ի՞նչ ալբուրէն: Ի՞նչ են բովանդակում իրանց մէջ ալս արձանագրերը: Ահա հարցեր, որոնց համար ժամանակը գեռ չէ եկել մի որ և է բաւեցուցիչ պատասխան ստանալու:

Անկասկած, սրանց մէջ պարունակուած գաղտնիքը եր ժամանակին կը խոնարհի մարդի կորովամիտ իմաստասիրութեան առջեւ, — և ալդ արձանագրերը, որք զրուած են կարդալու համար, ինչպէս ասում է Օպկերտ, — վերջապէս կը կարդացուին: Բայց ալդ ժամանակը գեռ չէ հասել: Այս լոգ-

ուածի նպատակն է ծանօթացնել ընթերցողին թէ՝ Ինչ է կատարած մինչև ալժմ այս խնդիրները լուծելու համար։ Սակայն մենք պիտի խոստովանենք, որ մինչև ալժմ շատ քիչ է արած. արտարայտուած են մի քանի ենթադրութիւններ, որք եթէ հաստատուեն, հանդիման կը գան լուսալիք դիրքեր հանդերձեալ հեռաւոր հետազօտութեանց համար։

II

Սեպազիր: Վանի արձանագրուրինները եւ նրանց վերծանուրեան պատմուրիննը։

Հայոց պատմութիւնում, գլխ. XVI գիրք ա., Մովսէս Խորենացին պատմում է թէ՝ ինչպէս ալրասի իրան ալն և կաթոգն Նամիրամ Հիմնեց Վանը։ Նկարագրելով Վանի շինութիւնները, Խորենացին շարարառում է՝

«Իսկ զբնդդէմ արեգական կողմն անձաւին, որ և ոչ գիծ մի երկաթոլ ալժմ վերագրել ոք կարէ, զալսպիսի կարծրութիւն նիւթոլ՝ պէս պէս տաճարս և սենեակս օթից և տունս զանձուց և վիչս երկարս, ոչ գիտէ ոք թէ որպիսեաց իրաց պատրաստութիւն հրաշակերտեաց։ Իսկ զամենայն երեսըս քարին իբր գրչաւ զմոմ հարթել, բազում գիրս ի նմա գրեաց. որոլ հայեցուածն միայն զամենայն ոք ի զարմանս ածէ։ Եւ ոչ միայն այս, այլ և ի բազում տեղիս լաշխարհին հայոց արձանս հաստատեալ, նովին զըովլ լիշտակ ինչ հըրամայէ զըել և ի բազում տեղիս սահմանս նովին զըովլ հաստատէր։»

Աւելորդ է աւելացնել, որ ինչպէս այս շինութիւններում, նոյնպէս և արձանագրութիւններում, Նամիրամը մի որ և է մասնակցութիւն չէ ունեցել։ Նամիրամի նշանակութեան վերայ, հայոց աւանդութիւնների մէջ կը խօսենք իր տեղում։

Այժմեան Վանը, նրա շրջակալքը ու սեպագրեը, որոնց
բովանդակութիւնը մասամբ և հաղորդում է, նկարագրել է
Լայեարդ (Layard Neneveh and Babylon 1850): Մէկ ու-
րիշ ևս ճանապարհորդ, Միհիթարեան ուխտից, Ներսէս Սար-
գիսեանը, որ երկար ժամանակ թափառած է եղել Վանալ
լճի կողմերում, լոյս ընծալեց 1864 թուին մի ընդարձակ
նկարագիր այս երկրի տեղագրութեան և տոհմագրութեան
վրա: Սա էլ ուշադրութիւն էր դարձրել սեպագրական ար-
ձանագրերի վրա և լարակցել է իր «ճանապարհորդութեա-
նը» արձանագրերի վիմագրական ութ պուրակ (շարք): Վան
ալցելող եղել են և ուրիշ ճանապարհորդներ, օրինակի Հա-
մար՝ Տեկսիէ, Ե. Բարէ և այլն, բայց գիտութեան օգտին
արած մեծ ծառայութեան պատիւը, անշուշտ պատկանում
է Շուլցին: Սա 1828 թւին այս տեղից ուղարկում է Եւ-
րոպա քառասուն և երկու հատ սեպագրական արձանագրե-
րի պատճէններ ու ինքը մէկ քուրդ ցեղապետի ձեռից գա-
ւաճանութեան զոհ գնում: Շուլցը իր օրագրում (Journ.
Asiat. III Serie, t. XI 1840) շատ գիպուածներում հաղոր-
դում է այսուեղ ստացած իր տպաւորութիւնները համարեա
թէ Խորենացու խօսքերով, չը նայելով որ սորանից լետու
անցել է տասն և հինգ դար:

Առաւել քան 1500 տարի Քրիստոսից առաջ Տիգրիս և
Եփրատ գետերի ափերի վրա գտնուած երկիրներում սկսեցին
գործ ածել նշանախէցներ, որք իրանց արտաքին ձևագրու-
թեամբ իրապէս զանազանվում էին թէ ալբուբենական տա-
ռաւերից, թէ իերօգլիֆներից, և հաւանական է որ այս նշանա-
խէցները իերօգլիֆների և ալբուբենական տառերի միջի քալ-
լափոխն են կազմում: Մեր խօսքը սեպագրերի վրա է, Սե-
պագիր (inscriptions cuneatae, cuneus—սեպ բառից, écriture cunéiforme. Keilschrift, cuneatic writing, նորնակէս
և arrow-headed scripture) մականունը տուած է սրանց

այն հիման վերալ, որ սրանք բաղկացած են այն սեպից և անկիւնից, որոնց բաց կողմը միշտ դէպի աջ է ուղղուած։ Այս երկու նշանով սեպագիրը արտալայտում է բաւականօրէն լեզուի ամենալն հնչիւնների բաղհիւսանքը։

Այս երկու նշանների վերալ հիմնուած են երկու՝ միմեանցից բոլորովին տարբեր գծագրական դրութիւններ (սիստեմաներ), Արիական կամ Անարիական կամ՝ ինչպէս ոմանք անուանում են՝ սիլլարական (սիղաբալ, սիւղաբալ լուն). Հայերէն փաղառական—կը նշանակէ—վանկաւոր)։ Ի մտի առնելով որ ամենալն անարիական սիստեմաներից Ասորեստանականը հասել է իր զարգացման վերին աստիճանին և որին հմտանալուց յետոյ դիւրանում են անարիական միւս սիստեմաները, գերազգօն հեղինակը ընդարձակ տեղ է տալիս իր զրքի մէջ այս սիստեմալիին։ Մենք այն պատճառաւ ընդարձակ տեղ տուինք, ասում է պ. Պատկանեանը, գառնալով Վանի արձանագրերին, — որ Ասորեստանական դրութեան ազգեցութիւնները շատ զգալի կերպով արտադառում են Վանի արձանագրութեան ծագման վրա։ 106 լեռնան բերած Վանի նշանախէցների կէսը՝ նոյն իսկ ձեւագրութեամբ՝ պատահում են Ասորեստանական գրութիւննում։ 11 ցուցակներից և 18 գաղափարախէցներից (իգէօգրաֆներից) մեծ մասը փոխ առնուած է Ասորեստանականից։ Մնացեալ նշանները գոյացել են անշուշտ տեղալին պարագալից ազգեցութեանց տակ։ Ընդհանրապէս խօսելով, Վանի արձանագրերը կազմում են, լիովին կանոնագրեալ սեպագրական չորրորդ սիստեման*): Որովհետեւ Վանի արձանագրերը կանգ-

*.) 1. Պարսից, 2. Մարաց կամ Սկիւթացոց և 3. Ասորեստանեաց։ Եթէ չը յիշենք Ակկատիեանը, — չորրորդը Վանի սիստեման է։

նած են միալնակ առանց թարգմանութիւնների, հակառակ աքամենիտեաններինք, այս պատճառաւ զայ մի որ և է յուսաւ-
շեր կետյանքարան նրանց վերծանութեանք համար, բացառ-
նելով այն ամենը, ինչ որ առած է Ասորեստանականից: Բայց
կը կին լակամալից կասկածանք է ծագում. Ասորեստանական
նշանախեցները, տեղափոխուելով դէպի Վան, չէ՞ որ կարող
էին այլալիել իրանց նշանակութիւնը, թէև պահպանել են
իրանց ձեւերը...: Ուրեմն ամեն բան մեզ անլալտ է. թէ շը-
րիդտ, թէ լեզուն և թէ ժամանակը:

Սրանից լետոյ պ. Պատկանեանը մի առ մի մատնա
ցոյց է առնում այն քսան և երեք (բացի Շուլցի քառասուն
երկուսից) Վանի արձանագրերը, որք գտնուել են վերջին
ժամանակներում, լականէ լանուանէ կոչելով նրանց աղբիւը-
ները:

Եթէ չը լիշենք Գրօտեֆէնդի անունը, Վանի սեպագը-
րերի վերծանութեան առաջին աշխատանքը պատկանում է
կորագամիտ և բազմակողմանի Հինկսին (Ed. Hincks) իր յօդ-
ուածով On the Inscription of Van. Սա առաջին և ծան-
րակշիռ փորձ է անում այս սեպագըրերի մեկնութեանց հա-
մար և մատնացոյց է առնում մի քանի այն դիրքերը, որոնց
ի նկատի պիտի ունենան նրանք, որք ուզում են Վանի ար-
ձանագրերի վերծանութիւններովը պարապել: Հինկսից լետոյ
քսան տարրուալ ընթացքում, ոչ ոք չէ պարապում այս վեր-
ծանութիւններով, թէև սեպագըրագէտները կողմնակի ցոյց
են տալի այս արձանագրերի վրա: Սրանց թւումն է Ֆիլօկ-
սենալ Լուզատօ''), որի գործ գրած միջոցները գիտնական
արժէք չունեն և այս պատճառաւ մնացին առանց հետևան-

) Etudes sur les inscriptions assyriennes de Persepolis etc. Padoue. 1850

Քի: Առաջատօ ի միջի այլոց կարծում է թէ՝ Վանի արձանագրերի լեզուն սանսկրիտ լեզուն մօտիկ է...

1871 թւին լուս է տեսնում Ֆր. Լենորմանի Lettres Assyriologiques առաջին հատորը, որի երկրորդ նամակը նույիրուած է, եթէ ոչ լատկապէս այս սեպագրերի ընթերցմանը, գոնեա ձգտում է հասու լինել նրանց իմաստին: Այս երկասիրութիւնը խօսում է առաջին անգամ ոչ միայն սրանց լեզուի այլ և ամբողջ բովանդակութեան վրա: Ուրեմն, առաջին անգամն է, որ ուշագրութիւն է գարձրած սրանց պատմական նշանակութեան վրա... Հինկոր, Վանի սեպագրերի լեզուի վերաբերմամբ, ցոյց է տալի մի քանի լատկանիշ նշաններ, ըստ որում այս լեզուն պիտի ընդունուի որպէս արիական տեսակներից մէկը: Լալարդ յալտնի չէ ում կարծիքն է առաջ ըերում ասելով թէ՝ Վանի արձանագրերում թաթարի կամ մօնգոլեան տարբեր են նշանարվում, իսկ Գեորգ Ռոլիսօն թէ՝ այս լեզուն ազգակցութիւն ունի մարաց սիստեմայի և Բարիլօնի ակաատիանների հետ: Լենորման այս ամեն գաղափարները հերքում է և ձգտում է ցոյց տալու թէ՝ Վանի արձանագրերի լեզուն վրաց լեզու է! Պ. Պատկանեանը հերքում է այս վերջին միտքը, բացատրելով մի առ մի, Լենորմանի գտած, ալսոտդիեան և վրաց լեզուների մէջ անլաշողակ քերականական համեմատութիւնները և ակներև ցոյց է տալի, որ Լենորմանի երկասիրութեան մէջ լեզուագիտութիւնը ամենանուազ կողմերն են...

Լուս է տեսնում Մօրդմանի երկասիրութիւնը²⁾ «Գերմանական արևելեան ընկերութեան հանդիսից էջերում: Այս

²⁾ A. D. Mordtmann—Entzirfferung und Erklärung der armenischen Keilinschriften von Van und der Umgegend, ի Zeitsch. d. M. Ges. 1872 հջ. 465—696:

աշխատանքի հետևանքը այն է դուրս գալի թէ՝ Վանի սեռ
պազրերի լեզուն պատկանում է արիական լեզուի գերդաստա-
նին և ըստ այսմ —սա հայոց լեզու է, —իստակ հինաւուրց
հայոց լեզու, և ի հարկէ այժմեան հայերէնից շատ հեռի.
Եթէ ի նկատի ունենանք այն հազար տարուայ ժամանակա-
միջոցը, որ բաժանում է միմեանցից այս երկու բարբառը,
այն ժամանակ դիւրըմբռնելի կը լինի սրանց զանազանու-
թիւնը... — Բայց այն լեզուն, որ Մօրդմանը առաջարկում է
մեզ, աւելցնում է Պատկանեանը, — որպէս հայոց հինա-
ւուրց լեզուի մի օրինակ, ոչ թէ հայերէն՝ արիական անգամ
չէ, այլ մի ինչ առանձին լեզու։ Մօրդմանը ինքն էլ սակալն
խոստովանում է իր յօդուածի վերջերում թէ՝ ալդ հինա-
ւուրց հայոց լեզուի հոլովները նմանութիւն ունին թուրա-
նական լեզուի հետ, իսկ բայերի ֆլեկսիները մօտենում են
հնդկա-եւրոպական բարբառներին։ — Մեղք չի լինի, հեգնում
է Պատկանեան, — մեր հոկուն, եթէ սկսենք պնդել թէ՝ Մօրդ-
մանի յօդուածին լարակցեալ զլօսարիում (բառարան) չը կայ
հայերէն մի բառ անգամ — օօօալյոտիո ԱԱ ՕԴԻԱԳՈ. Քե-
րականական ձևերումն էլ չը կայ ոչ մի նմանութիւն հայ-
երէնի հետ, այնպէս որ ալ. Մօրդմանի ամբողջ եզրակացու-
թիւնները դուրս են գալի շատ և շատ անձնական... 50

Խնչալէս տեսանք վերևում Վանի գրութիւնների մէկ մա-
սը փոխառնուած է ասորեստանականի և Բարիլոնի նշանա-
խէցներից, միւս մասը կազմում է տեղալին գրականական բերք,
որոնց լեզուն մեզ լայտնի չէ։ Այս արձանագրերի լեզուի նը-
կատմամբ մնում է մեզ յուս գնել գիտութեան այնպիսի աստ-
ղերի վրա, որպիսի են Յպպերտ, Բառլիսօն և սրանց տա-
ղանդառոր հետեւղները։

Վանի արձանագրերը՝ համարեա բոլորը՝ սկսվում են
լայտնի բացականչութեան նշանաբանով գէպի Վանի բարձ-
րագոլն աստուածութիւնը։ Այս աստուածներից աւելի հը-

նագոյնը պիտի համարել՝ hal-di, որ մինչեւ ալժմ լայտնի չէ եղել ուրիշ ազբիւրներից: Այս haldi-h հետ բաժանում են Վանի Օլիմպի նախագահութիւնը երկու ուրիշ աստուածներ՝ Տէ իսպաս և Պարնիս: Այս երրեակով չէ եզրափակում Վանի աստուածների թիւը. Նույցի ամբողջ XVII արձանագրութիւնը նույրուած է Վանի աստուածներին և որտեղ բացատրվում է թէ՛ որպիսի զոհարերութիւն և ինչ քանակութեամբ բերում էին ալս և այն աստուածներին: Այս արձանագրութեան մէջ բովանդակվում է Հին Հայաստանի ամբողջ պանտէօնը: Օրինակի համար առաջ ենք բերում մի նախադասութիւն. Հալդի Տիասպասսին Պարնասսին ազգային աստուածից (բերում ենք) զեց ոչխար և մէկ ուղա: (?) Երեկի այս նախադասութեան միտքը չէ հասկացուել ամբողջութեամբ, որովհետեւ սրանից յետով անլապաղ գալիս է կրկին Հալդի, որի համար նշանակուած է այս անգամ ոչ թէ վեց ոչխար, այլ 17 գոմեշ և 34 ոչխար ևալլն: Այս արձանագրում տեղ են գտել 75 – 80 աստուածներ, որոնց անունները առանց մեծ բացառութեան չեն կարգացվում: Ըստ Մօրդմանի ալսպիսի անուններ ունին ալս աստուածները. Khutui, Tura, Zibipara, Arsimit, Hamaspa, Didua, vilardi, Atbi, Kuera, Adaruta ևալլն: Մի քանի աստուածներ անուանած են ոչ յատուկ անունով, այլ քաղաքի և վայրաց անուններով. օրինակ՝ աստուած Տուսպաս քաղաքի: Կայ ևս մի աստուած որի անունը լիշեալ արձանագրում չըկայ և որին պատահում ենք Սարգսնեան արձանագրում. սա՝ Bagapartu-ն է, ինչպէս կարդում է Օպպերտ, – կամ Bag-mastuy ըստ Լենօրմանի և Ոմիտի:

Համեմատելով այս անունները այն անունների հետ, որոնց երկրագում էին Հայերը պատմական ժամանակում, այսինքն՝ Քրիստոսից առաջ VII դարուց յետով, մենք կը գանք այն եզրակացութեան որ VIII և VII դարերի միջում կա-

տարուել է հայոց կրօնական և այլ վերաբերութեամբ, հիմնաւոր յեղափոխութիւն. աւանդական և քաղաքական վերաբերմամբ հայերը ընկնում են գրացիների հզօր ազգեցութեանց տակ: Արամազդը դառնում է հայոց բարձրագոլն աստուածը, բայց Արիմանը, որպէս հայոց աստուած չէ լիշվում ոչ մի տեղ: Ահա այն աստուածների անունները, որք հաստատուել են Հայաստանում Իրանի ազգեցութիւնից. Արամազդ, Վահագն, Միհր, Տուր, Սանդրամետ և այլն: Սեմականներից անցել են Հայաստան զանազան տարեթուերում՝ Նանէ, Բէլ, Նաբոգ, ևալլն:

Արձանագրերից ամենահինը ընդունուած է համարել Շուլցի I և XXXVI: Առաջինումը(1) խօսվում է մէկ թագաւորի, Լուտիբը ու որդու վրա: Թագաւորել է այս Լուտիբը իրն երբ և իցեւ—լալտնի չէ, բայց սա Վանի արձանագրերի ամենահին անձն է հանդիսանում: Այս Լուտիբը ու որդու անունը առ ժամանակ պիտի կարգացուի այսպէս, Բելի դուրուս: XXXVI արձանագրերում պատահում են Isbuinis-ին Բելիդուրուսի որդուն: Այս Խարուինիսին նուիրուած է և XVII արձանագիրը: Այստեղ Խարուինիսը երևում է ոչ միայնակ, այլ իր որդոյ Մինուասի ընկերութեամբ, որին վեցը ել է նու, երեկի իրան իշխանակից: Ուրեմն, Խարուինիս, Բելիդուրուսի որդին է, Մինուաս, Խարուինիսի որդին, հուսկ ուրեմն, Մինուասը Լուտիբը չորրորդ ուղղագիծ սերունդն է: XVIII, XIV, XV և Շուլցի ուրիշ բազում արձանագրերում Մինուասը անուանում է իրան Խարուինիսի որդի և Վահակտա աշխարհի և Տուսպա քաղաքի թագաւոր: Երևելին այն է, որ Վահակ թագաւորները գէթ մի անգամ չեն անուանում իրանց Ուրարտի և Վահակ թագաւորներ, որպիսի անուններն ենք ստէպ պատահում ենք ասորեստանականների մէջ...

Մինուասից յետոյ գալիս է նրա որդին Արգիստիսը, որին յաջորդում է նրա որդի Բելիդուրուս II: Արանց թա-

գաւորութիւնը տևել է մօտաւորապէս 150 տարի։ Ասորեստանական աղբիւրներից մենք տեսնում ենք, որ այս թագաւորներից առաջ եղել են և ուրիշները, որք տիրում էին այս կողմերը, բայց այնու ամենալնիւ միայն այս հինգն են թողել լիշտակ Վանի արձանագրերում։ Սրանց ժամանակը հարկաւոր է համարել Քրիստոսից առաջ IX—VII դարերի մէջ։

II

Մալիս Խորենացու Հայոց նին պատմութեան զիսաւոր
աղբիւրը՝ Մար Աբաս Կատինան։

Հալաստանի հնագոյն պատմութիւնը, այսինքն այն
պատմութիւնը՝ որ VIII—VII դարերից առաջ է ընթացած՝
մեզ բոլորովն անյատ է, ոչ իրանք հայերը և ոչ սրանց
դրացիները չեն պահել ոչ մի ասացուած արդ դարեթուերի
պատմութեան վերաբերմամբ։ Վերջին ժամանակներում Ա-
սորեստանեալց և Պարսից տրանսագրութիւնների վերծանու-
թեանց ենք միայն պարտական, որ փոքր ինչ ծանօթացել
ենք այն եղելութեանց հետ, որք տեղ են ունեցել Հալաս-
տանում X V դարեմիջոցում Քրիստոսից առաջ։ Իալց որ
կարողանանք գնահատել սեսլագրական վերծանութեան ցոյց
տառած ծառայութիւնը պատմութեանը, հարկաւոր է նախ
և առաջ գննել թէ ինչ գրութեան մէջն էր Հալաստանի
հին պատմութիւնը մինչև նորագոյն ժամանակներս և որ աս-
տիճանի կարելի է հաւատ ընծալել այն ասացուածներին, ո-
րոնց Հալաստանի պատմութեան փոխարէն էին ցոյց տալի...

Միտ բերելով Հալաստանի աշխարհագրական դիրքը, մենք
կարող ենք համարձակ սկսել, որ նա բնակեցրած էր ամե-

նահեռաւոր ժամանակներում։ Հին աշխարհի բարեկրթեալ ազգերի կենդրոնում գտնուելով, Հայաստանը ներկայացնում էր այն վայրը, որտեղ կատարվում էին մինչև նորագոյն ժամանակը արևմտքի ունեցած ամենայն ընդհարութիւնքը արևելքի հետ։ Սակայն Հայաստանը, որպէս մի թագաւորութիւն չէ ունեցել մի նշանաւոր գեր մարդկութեան պատմութեան մէջ, և նրա անունը եղել է ոչ այլ ինչ, եթէ ոչ մի աշխարհի անուն, որտեղ վճռում էին իրանց վէճերը նորա հզօր գրացիները՝ ասորեստանցիներ, մարաց ազգեր, պարսիկներ, լուներ, հռօմալեցիներ, պարթևներ, արաբներ-թիւքիալի ցեղեր, մօնզօններ, տաճիկներ, օսմանցիներ, ըուսեր... Զը նալելով Հայաստանի թէ աշխարհազրական լաջողակ գիրքին, թէ նրա ընութեան հարստութեանը, նա, որքան լալտնի է, չէ եղել կրթուած ազգի հայրենիք և նրա ընակիչները չեն եղել երբէք աշխարհակալներ, գոնեա չեն հանդիսացել երկար ժամանակ որպէս մի բոլորովին անկախ ազգ։ Այս երեսոյթի պատճառը մեկնել գրացիների կենցազակրթական զօրութեան գերազանցութիւնով—այդ այնքան հիմնաւոր ենթագրութիւն չի լինի... Բայց բնչու Հայաստանի բնակիչները չը կարողացան իրանցից կազմել մի հրզօր քաղաքական մարմին, որի տեղ՝ ընդհակառակն՝ տեսնում ենք նրանց իրանց զօրաւոր գրացիների մշտական կախման ներքոյ և օտար ազգերից ստորագրեալ։ Թէև այս խնդրի լուծումն չէ վերաբերում մեր յօդուածին, բայց այնու ամենալինիւ կաւելցնենք թէ՝ ոչ նրա ընակիչների արիութեան և ոչ քաջութեան կամ հայրենասիրութեան պակասութիւններն էին արգելք լինում ահաւոր երեւալու իրանց գրացիներին արտաքուստ և ծաղկած ի ներքուստ, այլ քաղաքական հասունութեան և այն սկզբունքների բացակալութիւնը, որք առաջ են բերում հաստատուն թագաւորութիւններ...
Քսենոփոնտի և Մովսէս Խորենացու պահած աւանդու-

Հայ և Ի. Պ. Վ.

թիւններից մենք տեսնում ենք, որ առաջին աքամենիդնաների ժամանակներում Հայաստանի մէջ կալին թագաւորները Այս աւանդութիւններում մենք գտնում ենք Տիգրանի և նըրը հօր լիշտակները. բայց թէ իշխանութիւնը անցաւ սըրանց լաջորդներին, կամ աքամենիդները զրկեցին Հայաստանը Հայկազեան, հին թագաւորների տոհմից — մենք չը գիտենք: Բիսուտունեան արձանագրերից լաւոնի է միայն, որ Դարեհ քանից անգամ իր զօրքերը հանում է պատերազմի դաշտը և միայն դաժան ճակատամարտերից լետով է կարողանում խորտակել Հայերի կամակորութիւնը, բայց նոյն իսկ արձանագրում մենք մի որ և է հայոց թագաւորի անուն չենք գտնում, թէև Դարեհ, խօսելով իր պատերազմերի վրա ուրիշ ազգերի հետ, ամեն անգամ անուանում է նրանց թագաւորների անունները: Եստ Հաւանական է, որ այն ժամանակ Հայկազեանց արքայական սերունդները կոտորուած էին և չը կար մի ալնպիսի առանձին նշանաւոր հայոց առաջնորդ *): Մէկ անգամ միայն Հայաստանը միջոց է ունենում ժողովունլու մի հզօր իշխանութեան տակ. այդ՝ Պարթևաց ժամանակն էր, երբ Արշակունիք, Համարեա թէ առանց պատերազմի ձեռք բերելով Հայաստանը, տուեցին նըրանց հարստութիւն, որը տիրեց մինչև 500 տարի: Մինչև այս ժամանակը Հայկական զանազան ցեղերը ապրում էին առանձնացած և ինքնազլուխ իշխանութիւններով: Ակներև է, որ նոքա երկար ժամանակ հասկացողութիւն չեն ունեցել իրանց Համարիւն ազգակից լինելը և անուանվում էին ոչ թէ մի Համազգային անունով, այլ մասնաւոր ցեղերի կամ տեղերի անուններ: Ազգային միութիւն ճանաչելը բաւականին յապազում է և գալիս է միայն այն ժամանակ, երբ որ զօ-

*.) Նշյն միտքը յայտնում է և Թումաս Արծրունին:

անում է կենտրօնական իշխանութիւնը, որ շաղկապում է եղիքը, երբ ծագում է ընդհանուր գրականական կամ գի-անական լեզուն, երբ տարածվում է ընդհանուր կրօնը և ըբ քաղաքական շահերը դառնում են հասարակաց շահ...

Խօսելով Հայաստանի հին պատմութեան վրա, հարկ է նզ ծանօթանալ Մովսէս Խորենացու հետ, որը առաջինն եղել, որ գրել է իր ազգի պատմութիւնը գիւցազնական ամանակներից սկսած մինչև իր ժամանակները, ալսինքն ինչև Վ դարը Քրիստոսից լետով:

Մենք բաց կը թողնենք ալստեղ Խորենացու կինսաւթութիւնը, որ անում է ալ. Պատկանեանը, հիմնուելով նոյն իսկ Խորենացու կողմնակի ցոյց տուած լուրերի վրա այս մասին, բաց ենք թողնում նոյնպէս «Հայոց պատմութեան» ուրիշ ազրիւրների վրա արած Խորհրդածութիւնները և կանգ ենք առնում Խորենացու զլխաւոր ազրիւրի, Մար Արասի և սրա գրքի վրա:

Խորենացին պատմում է՝ «Եւ ընկալեալ Արշակայ մեծի զիքըն ի ձեռաց Մար Արաս Կատինալ, մեծաւ լրջմտութեամբ հրամալէ առաջի առնել նմա զգիւանն արքունի՝ որ ՚ի նի-նուէ... Եւ խուզեալ սորա զամենայն մատեանսն, գտանէ մա-տեան մի հելլէն գրով, լորով վերալ էր, ասէ, (Մար-Արասը) վերնագիրն ալուղիսի՝ Այս մատեան հրամանաւ Ազէք-սանգրի ի քաղդէտցւոց բարբառոյ փոխեալ ի ոյնն, որ ունի գըռուն հնոց և զնախնեացն բա-նըս... Ալոմ մատենէ Մար Արաս Կատինալ զմերոյ ազգիս իհալն հանեալ զպատմութիւն հաւաստի, բերէ առ արքալ Աաղարշակ ՚ի Մծրին լոյն և ասորի գրով... Առեալ (այս պատմութիւնը) Վաղարշակ առաջին իւրոյ գանձուն համա-ըելով՝ դնէր լարքունիսն ի սլահեստի մեծաւ զգուշութեամբ և մասն ինչ ի արձանի հրամալէ գըօշմել...

Դեռ ևս Կատրմեր ուշագրսութիւն է դարձնում այս պա-

բաղաների անլարմարութեանց վրա *): Եւ եթէ նրա այս մասին արած առարկութիւնները հիմնաւոր չեն ամենը, ար նուամենալնիւ նրանցից մի քանիսը ծանրակշիռ են: Հայոց պատմութեան մտադիր ընթերցանութիւնից դիւրաւ երևում է, որ Խորենացին սխալուել է իր տղբիւրի վերաբերմամբ. Խորենացու ճշտութիւնը և արդարամտութիւնը ընդունում են մինչև անգամ նրանք, որք միանգամայն չեն մասնակցում նրա, Մար-Աբասի վրա ունեցած, վստահութեանը, այս պատճառաւ պկ. Պատկանեանը իր հեռաւոր մեկնութեանց մէջ պատսպարում է Խորենացուն և դիմում է անմիջապէս Մար-Աբասին: —Գրականական խաքէութիւնը, գրում է մեր հեղինակը, —ըստ մեծի մասին պահում է իր մէջ այնպիսի լատկանիշներ, որք ագան կամ անազան բացալայտում են նրանց լինելը, և յատուկ ինքը զինաւորում է հետազօտողին պարզ ապացուցներով իր գէմ: Դատապարտելով Մար-Աբասին իր կեղծութեան պատճառաւ, մենք կաշխատենք հէնց իր խօսքերում գտնել հաստատութիւն մեր կարծիքին: Ուշադրութիւն դարձնենք վերը առաջ բերած հատուածի հետեւեալ կէտերի վրա:

1) Թէ Մար-Աբաս կատինան, ասօրի գիտնականը, 150 տարի Քրիստոսից առաջ է եղել աշխարհում, որովհետեւ սաձւացնում է իրան ժամանակակից Արշակ մեծին, որեմն՝ Միհրդատ 1-ին, որը եղել է այն ժամանակներում:

2) Թէ նա աշխատասիրել է այն հաւաստի գրուածքներով, որք գտնվում էին Նինուէի դիւանում:

*.) S. Quatremére—Observation sur la ville de Nînive, troisième article 't journal de Savants, 1850, p. 365 Աւելորդ չելինի եթէ մատնացոյց առնենք նմանապէս Թրէրէին. Frèreret.—De eannée arménienne, t. XII p. 207—208.

3) Թէ նա գտել է այս դիւնում մի զիրք հետեւալ վերնագրով. Այս մատեան հրամանաւ Աղեքսանդրի ՚ի քաղացաց բարբառոյ փոխեալ ի լոյնն, որ ունի զբուն հնոց և զնախնեացն բանու.

4) Թէ Մար-Արարը քաղուածքներ է արել նրանից լուսաց և ասօրի լեզուներով և բերել է Վազարշակին, որը հրամալել է այս հաստածներից մի մասը քանդակել արձանի վրա, և

5) Թէ առաւել քան երկու հազար տարի մեզանից առաջ պուն Հայաստանում չը կտիին պատմական շարադրութիւններ երա հնագոյն անցքերի վրա, և սրանց ստանուլու համար հարկուոր է եղել ուղարկել ասօրի զիտնականին Նինուէի դիւնուր:

Քննողութեան առնենք այս կետերը և տեսնենք սրանց ամեն մէկը արգեօք չէ բովանդակում իր մէջ այնպիսի հանդամանքներ, որք կասկածանք են պատճառում, և ամենի մէջ ի միասին—այնքան անդէպաց և ժամանակագրական սոտորումների գումարումն, որ մենք իրաւունք ունենանք առաջ Մար-Արարին—կամ այն հեղինակին, որը նուիրել է հեղինակութիւնը վերջինին—խարդառանիչ անունը...

Նինուէի դիւնու արդարեւ եղել է, բայց ոչ Ա այլ VII լարում Քս. ա.... Աշուր-Բանի-ապալի (Սարդանապալ) (668—647—628 Ք. ա.) մահից յետ սկսում են իրանց կործանիչ որշաւանքները սկիւթացիք: Սրանցից յետոյ շուտով Կիսկարը տալիս է վերջին հարուածը Նինուէին, որը իր աւետակների տակից էլ բնաւ չէ վերանորոգվում... Փոքը առիոքը այս աւերակներն էլ ծածկում են փոշիով և արդէն V—V դարերում Ք. ա. Նինուէի անունը անհետանում է. բոլես գոլութիւն ունեցող քաղաքի անուն, չէ լիշվում նաև մի պատմագրից: Ենթադրենք անգամ երկու անկարելուիւն. նախ՝ թէ Մար-Արարը մի որ և է ճանապարհով եղել է



այն դիւանում, և երկրորդ՝ ասենք թէ նա ծանօթ էր ըեւուազը երի ընթերցանութեան հետ; Եթէ այդպէս է, այժմանակ մենք իրաւունք ունենք սպասելու նրանից այն պիսի տեղեկութիւններ, որք պիտի համաձայն լինէին, գոնէ մօտաւորապէս, այն նորազոյն տեղեկութիւնների հետ, որք ստացվում են այժմ բուն ասորեստանեալի դիւանական հաւաստիքի վերծանութիւններից; Բայց այս ակնկալեալ արգասիքի տեղ՝ հէնց նոյն իսկ Ասորեստանի պատմութեան վերաբերմամբ՝ մենք բնչ ենք գտնում: Զարմանալի և շատ գիպուածներում բառ առ բառ համաձայնութիւն կտեսի ասի պատմածների հետ... Կրկին կասկած է ձգում մեր սիրաց նինուէի դիւանում պարապող պատմաբանը... Այն, ինոր պատմում է Մար-Աբասը, ի հարկէ բաց առնելով հայոց պատմութիւնը, 80 տարի Աղեքսանդրից և 230 տար նոյն իսկ Մար-Աբասից առաջ լալտնի էր ամբողջ ընթերցունաց աշխարհին:

Հաւանական է, Մար-Աբասը կամեցել է տալ իր կեղաղբիւրին մեծարու հեղինակական ծագում, ինչպէս արել մի ժամանակ Բերօզ, և ահա նա տառ առ տառ կրկնու է այն, ինչ որ ասած էր Բերօզի գրքի վերաբերութեամբ և այս մատեան (այսինքն Մար-Աբասի աղբիւրը) հրամանաւ Աղեքսանդրի ի քաղղէացւոց բարբառով փոխեալ ի լունն...

Այս է պատճառը, որ այս գիրքը լուս է տեսնում ու ունց անունի՝ վերոիշեալ մի օտարութի վերնագրով... Կը ըելիք է եզրակացնել թէ այն գիրքը, որի վրա ուշագրռութիւն է գարձնում Աղեքսանդրը և որը հրամալում է թարգման յունարէն, մնաց անլայտ ամբողջ 800 տարի նոյն իսկ լուսաց և միայն Խորենացին գարձրեց իր ուշագրռութիւնը նրա վրա... Ակներե է, որ այս գիրքը ի հնումն չէ եղել գրաւով այլ Մ. Խորենացուն մօտաւոր ժամանակներում, և նրա հինակը վերագրել է մի ինչ Մար-Աբասին, մեծն Արշա-

ժամանակակցին։ Այն ժամանակներում անգամ (Խորենացուց փոքր ինչ առաջ) այս մատեանը իր չնչին բովանդակութեամբ և անքննողական մեկնութեամբը ոչ մի բարեբոլն մարդի ուշադրութիւնը չէ դարձնում իր վրա, իսկ Խորենացուն կաշառել է միայն նրանով, որ Հայաստանի պատմութեանն է վերաբերել, որի վրա երբէք ոչինչ չէ եղել գըրած... Մովսէս Խորենացու համար հանգամանքները այնպէս էին գասաւորուել, որ ստիպուած է եղել, որտեղից ել որ լինէր, ստեղծել Հայաստանի պատմութիւնը։ Յարգանքով վերաբերուելով ամենայն գրականական աշխատանքին, ի ըընուստ բարեխիղճ Մովսէսը չէր կարող ինքը յօրինել պատմութիւնը առանց աղբիւրի, առանց մի ականաւոր հեղինակութեան, մէկ խօսքով՝ առանց մի ձեռքածու գրքի... Բայց մի անգամ գտնելով ալսպիսի մի գիրքը, հիացած, ողջագորում է նրան, պատրանքներից զերծ աչքով չէ նայում նրա վրա, չէ քննադատում նրան. նա գտաւ այն գիրքը, որը մեծ գժվարութիւններից է նրան հանում։ Խորենացուն առաջարկում են գրելու Հայաստանի պատմութիւնը, բայց նա չունի մի որ և է աղբիւր, իսկ բերանից բերան անցնող աւանդութիւններին չէ հաւատում, անուանելով նրանց անհեթեթքանք։ Ընդհակառակն՝ պատահելով հարկաւոր գրքին, որը պսակուած է հրաբուրիչ վերնագրով ու նուիրական վաղնջականութեամբ, նա համարձակ և միանգամայն հաւատ է ընծալում նրան...»

Խորենացու պատմութեան առաջին գիրքը հիմնովին ուսումնասիրելուց յետոյ գժուար չէ դալ այն եղբակացութեան, թէ Մար-Աբասը յօրինել է Հայաստանի պատմութիւնը, քանելով նրա բովանդակութիւնը Հայաստանի աւանդութիւններից, սոսնձելով և լարմարացնելով Կտեսիասի առաջաւոր Ասկալի պատմութեան շըջանակներին, որը ոչ այլ ինչ է եթէ ոչ նոյնպէս աւանդութիւնների և ասացուածների ար-

գտոիք: Նոյն իսկ պաղածնութեան համար Մար-Արասը նախ-նիք է սրսնում և չը գիտենալով պատեհազոյնը, նա հաւա-տացնում է ընթերցողին թէ ինքը չէ յօրինողը, այլ արտա-գրել է մի մատեանից, որը Ալեքսանդրի հրամանով է եղել թարգմանուած... Մի ուրիշ տեղ (գր. ա. գլ. XLV) նա իր ազգիւրը անուանում է թագաւորաց մատեան, — այս ձեն ու-ոճը մտաբերում է մեզ Կտեսիասի մի տեղը (Diod. II XXXII)... Մար-Արասի փոխառական կախումն Կտեսիասից ակներեւ է...

Հայերի քրիստոնէութիւն ընդունած ժամանակից սկսած մինչև հինգերորդ դարի սկիզբը — սա այն ժամանակաշրջան հարկաւոր է համարել, երբ ամբողջ Հայաստանում տիրապե-տում էր ասորի գրականութիւնը, գեռ ևս III դարում Բար-գեսան գրում է Հայաստանի պատճութիւնը, որի հատուած-ները պահպել են Խորենացու գրքումը. քրիստոնէութեան ժամանակ ասորի Զենոբը *) ասորի լեզուով գրում է Հայերի քրիստոնէութիւն ընդունելու պատմութիւնը... Ալտափիսի հանգամանքներում զարմանալի չէ, եթէ մի ինչ դիտնական ասորու խելքին մտել է Հայաստանի ամբողջ պատմութիւնը գրելու: Մար-Արասի դործած խեղաթիւրութիւնը միայնակ չէ ասորի գրականութիւնում. նոյն իսկ Խորենացին, որ հա-ւատ է ընծայել Մար-Արասի յառաջարանին, նոյն վստահու-թեամբ վերաբերուել է ևս մի ուրիշ երկասիրողին, որը իր վերջարանութիւնում ժամանակակից է անուանում իրան Եգե-սկալի Աբգարին և Փրկչին. մեր խօսքը Լաբուբնի կամ Լիբուբնի վրա է, որը սրբազրողի սխալմամբ Խորենացու պատմութիւնում Ղերուբնալ է անուանած՝ «Ղերուբնալ» որդի Ափշարարայ դպրի գրեաց զամենալն դոր-ծըս, որ ինչ յաւուըս Աբգարու և Սանատրկու. և եդ ի գիւանին լեդեսիալի: » Բայց այժմ յալտնի է,

*) Պատմութիւն Տարօնց. Զենոբ Ասորի. 1832. Վ. Ենետիկ:

որ սա վաղ քան երրորդ դարը չէր կարող գրուել և հեղինակը
ունեցել է իր պատճառները խարդաւանելու իր բարեսպաշտ
ընթերցողներին:

Աերեւ մենք ասացինք թէ Մար-Արասի գիրքը ոչ ոք
չէ կարգացել բացի Խարենացուց... Սերէսսի գրքի առաջ ^{*)}
մենք կը կրկնենք նոյնը, բայց հետեւեալ պալմանով. ոչ ոք,
իրաւ է, այնպէս քաղուածներ չէ արել Մար-Արասից, ինչպէս
անում է Խորենացին, բայց Սերէսսի գրքից երեսում է, ոք
այս վերջինն էլ քաղուածներ է անում Մար-Արասից, տալով
նրան Մարաբալ Մծուբնացի փիլիսոփայ անունը՝ Այն խօս-
քերը, որոնցով ծանօթացնում է նա մեզ այս գրքի հետ, նոր
լոյս են ձգում Մար-Արասի, նոյնպէս և նրա ժամանակի վրա...
«Անդ հայելով, պրամում է Սերէսսը, —ի մատեանն Մարա-
բալ փիլիսոփալի Մծուբնացու, զոր եգիտ գրոշմեալ ի վերալ
արձանի ի Մծրին քաղաքի՝ յապարանսն Սանատրուկ արքալի
հանդեպ դրան արքունական տաճարին, ծածկեալ յաւերածի
արքունական կալենիցն:»

«Քանզի զիւնս տաճարին այնորիկ խնդրեալ ի դուռն
արքալին պարսից և բացեալ զաւերածն վասն ուեանցն ըստ
դիսլան արձանազրին գրոշմեալ ի վերալ վիմի զամս և զաւուրս
հինգ թագաւորացն հայոց և պարթեաց, լունարէն դպրու-
թեամբ, զոր իմ գտեալ ի Միջագետու ի նորին աշակերտացն,
կամեցալ ձեզ զրուցակարգել. քանզի այսու ունէր վերնագի-
րըն այսպէս:»

«Ես Ագաթանգեղոս գրիչ գրեցի ի վերալ ար-
ձանիս այսորիկ իմով ձեռամբս զամս առաջին
թագաւորացն հայոց, հրամանաւ քաջին Տրդա-
տալ առեալ ի գիւանէ արքունի, զոր փոքր մի և

*) Պատմութիւն Սերէսսի եպիսկոպոսի հերակլն և սկիզբն
նորագիւտ պատմութեան Միիթարայ Անեցւոյ. Ա. պ. 1879.

ապա լիւրում տեղւոջն տեսցես զպատճէնն ^{*)}։

Սեբէոսի հեռաւոր պատմութիւնից մենք համոզվաւմ ենք, որ Խորենացու Մար-Աբաս Կատինան Սեբէոսի Մծուք-նացի փիլիսոփայ Մարաբայն է։ Ի՞նչ է դուքս գալի։ Խորենացուց մենք գիտենք, որ Նինուէից բերած պատմութեան մի մասը Վաղարշակն է քանդակել տալի արձանի վրա Մըծքին քաղաքում, իսկ Սեբէոսի պատմածումը մենք պատահում ենք այն մարդին, որը կարդացել է և արտազրել է այս արձանի վրա զրած պատմութիւնը... Բացի այդ՝ Սեբէոսի կարծիքով այս արձանը դրուել է 500 տարի ուշ, քան Խորենացու մատնացոլց արած, ժամանակը, որովհետեւ նա վերագրում է այդ գործը Տրդատին և նրա ոչ պակաս լալտնի քարտուղար Աղաթանգեղոսին, որք եղել են III դարի վերջերում և VI տարի սկզբում... Ալսպէս, մենք հասանք այն կէտին, որտեղ կարելի է անել միայն մի ենթադրութիւն, որը կարողանալ համաձայնել Մար-Աբասի վրա մեր ասածները Սեբէոսի հատուածի հետ։ Այս ենթադրութիւնը հետեւալն է. Մար-Աբասը (կամ նա, ով վարագուրվում է այս անունով), III—IV դարուալ ասորի գիտնականը, պատահմամբ եղել է Սեբէոսի լիշած աւերակները փորելուց և արտազրել է այն արձանագրութիւնը, որը պարունակում էր Հալաստանի դիւցազնական պատմութիւնը։ Այս արձանագրութիւնի պատճէններից մէկը ընկնում է և Սեբէոսի ձեռքը։ Նոյն իսկ արձանագրութիւնը միտք է տալի Մար-Աբասին կեղծագրելու աւելի ընդարձակ և աւելի կարգաւորեալ Հալաստանի պատմութիւն...
III

Հայոց հինաւորց պատմական աւանդութիւնների բնօւրինը

Հայոց ծագումն Խորենացին հանում է նոյից. Նոյ, Յա-

^{*)} Տես պատմ. Վարդանանց, ապ. ի. Վենետ. եր. 31, 35.

Արաքսը և լալնացնելով իրանց սահմանները, արմէնները պիտի ընդհարուեին հայոց հետ հարաւալին Հայաստանում։ Դրական աղբիւրներից մեզ ոչինչ լայտնի չէ թէ՝ Բնչ հետեւանք ունեցաւ այս ընդհարումն։ Երևի, շատ հաւանական է, որ արմէնները լաղթուեցան հալերից, որոնց ազգակին անունը գառնում է ընդհանուր երկու իսկ ցեղի համար, այնպէս որ արմէնները և հայերը սկսում են անուանել իրանց մի և նոյն հայ անունով։ Յայերը և պարսիկները, որք ծանօթ էին արմէնների հետ առաջ էլ, շարունակում են տալ նրանց նոյն իսկ ցեղային, Արմէն, անունը, որպէս արժըմ մենք ենք անում ունդարների հետ, կոչելով նրանց ունդարներ, թէ և իրանք, խաւուելով մաճառների հետ, վաղուց է որ գաղտարել են համարել իրանց ունդար...

Երկու ցեղերի միանալը՝ ի մի քաղաքական ամբողջութիւն պիտի արտադատուեր ժողովրդալին աւանդութիւնների սերտ միաւորութիւնից... Եւ որովհետև Արմէնները Արմենակին էին համարում իրանց նահապետ, իսկ հայերը Հայկին, ուրեմն՝ ըստ բանաստեղծական ճշտութեան օրէնքների պահանջմանց՝ Արմենակը և նրա լաջորդները պիտի խաւուելին Հայկի և նրա ընտանիքի հետ։ Այս երկու ընտելացած ասացուածների որ նախնանունը (ԹՈՒԱՄԻ) պիտի բռնէր առաջին տեղը։ Յալտնի բան է — Հայկը, որովհետև հայերը Արմէնների հետ ունեցած ընդհարումներից լաղթող են գուրս եկել (ենթադրութիւն), երկրորդ՝ որովհետև։ արմէնները սկսան անուանուել հայ, թողնելով օտար ազգերի կամքին տալ իրանց նախկին՝ արմէն՝ անունը։ Ընդունելով հայ անունը, ի հարկէ, նրանք իրանց նահապետ պիտի շինէին Հայկին և պիտի հանէին սրան իրանց նախնի ցեղապետների գլուխը, իսկ իրանց հարազատ նախնանունը դնել նորի կոչման տակ, կամ կոչել նրան Հայկի որդի։ Այսպէս իսկ վարուեցան։ Թէ այդ չէ եղել նախկին ասացուածներում, երեսում է նրանից, որ

ապա լիւրում տեղւոջն տեսցես զպատճէնն *) .

Սեբէոսի հեռաւոր պատմութիւնից մենք համոզվաւմ ենք, որ Խորենացու Մար-Աբաս Կատինան Սեբէոսի՝ Մծուբ-նացի գիլիսոփալ Մարաբայն է: Խ՞ոչ է դուքս գալիք Խորենացուց մենք գիտենք, որ Նինուէից բերած պատմութեան մի մասը Վաղարշակն է քանդակել տալի արձանի վրա Մըծ-բին քաղաքում, իսկ Սեբէոսի պատմածումը մենք պատահում ենք այն մարդին, որը կարդացել է և արտագրել է այս արձանի վրա դրած պատմութիւնը... Բացի ալդ՝ Սեբէոսի կարծիքով այս արձանը դրուել է 500 տարի ուշ, քան Խորենացու մատնացոլց արած ժամանակը, որովհետեւ նա վերագրում է ալդ գործը Տրդատին և նրա ոչ սպակաս յալտնի քարտուղար Աղաթանգեղոսին, որք եղել են III դարի վերջերում և VI տարի սկզբում... Այսպէս, մենք հասանք այն կէտին, որտեղ կարելի է անել միայն մի ենթագրութիւն, որը կարողանալ համաձայնել Մար-Աբասի վրա մեր ասածները Սեբէոսի հատուածի հետ: Այս ենթագրութիւնը հետևեալն է. Մար-Աբասը (կամ նա, ով վարագութզում է այս անունով), III—IV դարուալ ասորի գիտնականը, պատահմամբ եղել է Սեբէոսի լիշած աւերակները փորելուց և արտագրել է այն արձանագրութիւնը, որը պարունակում էր Հայաստանի դիւցազնական պատմութիւնը: Այս արձանագրութիւնի պատճեններից մէկը ընկնում է և Սեբէոսի ձեռը: Նոյն իսկ արձանագրութիւնը միտք է տալի Մար-Աբասին կեղծագրելու աւելի ընդարձակ և աւելի կարդաւորեալ Հայաստանի պատմութիւն...

III

Հայոց նինաւուրց պատմական առանդուրիւնների քննուրիւնը

Հայոց ծագումն Խորենացին հանում է Նոյից. Նոյ, Յա-

*) Տես պատմ. Վարդանաց, ապ. ի. Վենետ. եր. 31, 35.

բեթ, Գամեր, Թիրաս, Թորդոմ,—առանց մատնացոլց անելու տղբիւրները թէ ո՞րտեղից է նա քաղել այդ: Օրինակ՝ Թիրասի վերաբերմամբ նա ասում է՝ «այլ ալսպէս զսա կարգեալ գտաք ի լուշագունէ ումեմնէ և լընթերցասիրէ Ասորւոյ» (?): Թորդոմից լետոյ հայոց ազգաբանական սերունդներին նա ալսպէս է կարգաւորում՝ Հայկ, Արմենակ, Արամալիս, Ամասիայ, Գեղամ, Հարմալ, Արամ, Արայ Գեղեցիկ: Սրանց վերաբերմամբ հաւատացնում է թէ՝ «Եւ է ճշմարիտ և մի ոք լերկուսացի, քանզի պատմէ մեզ զայսոսիկ լոլով իրս հաւատարիմն Աբիւդենոս» և այլն... Այսպէս, օտար աղբիւրների զօրութեամբ Խորենացին իր ազգի ազգաբանութիւնը հասցնում է մինչև Նոյը և մանրամասնութիւնների համար գիմում է իր գլխաւոր աղբիւրին, ասորի Մար-Աբաս Կատինալին, քաղում է այնտեղից այն ամեն տեղեկութիւնները, որոնց հարկաւոր է տեսնում որդւոց լորդիս հազորդելու համար...

Պ. Պատկանեանը մտաբերում է իր ընթերցողներին հայոց պատմութեան առաջին գրքի IX—XV գլխների կարճառօտքովանդակութիւնները: Մենք աւելորդ ենք համարում մեր ընթերցողների համար առաջ բերելու պատմութեան ակնարկած տեղերը, ենթագրելով, որ իրանք ընթերցողները, եթէ հարկաւոր կը տեսնեն, անմիջապէս կը դիմեն Խորենացուն: Այնու ամենալիւ երեք փոքրիկ քաղուած կանենք. 1, «Երթեալ ընակէ (Հայկի վրա է խօսքը)» ի լեռնոտին միում ի դաշտավայրի, (Արարատի) լորում սակաւք ի մարդկան է յառաջագոյն ցըռելոցն դադարեալ ընակէին. զորս հնազանդ իւր արարեալ... 2, «Եինէ (դարձեալ Հայկը) և գիւղ մի և անուանէ լիւր անուն Հայկաշէն: Յիշի և աստանօր պատմութիւնս. Հարաւոյ կողմանէ դաշտի սալսորիկ առ երկայնանստիւ միով լերամբ ընակէ եալ յառաջագոյն արք սակաւք՝ ինքնակամ հնազանդէլ դիւցազինն»: 3, «Յայսմ խորութեան դաշտի ընակեալ

Արմենակալ, շինէ զմասն ինչ ի հիւսիսոյ կողմանէ դաշտին, և զոտն լերինն ի նայն կողմանէ, և զլեառն անուանէ լանգագոյն լիւր անուն Արագած, (ալժմ Ալագեազ) և զկալուածոքն՝ սոն Արագածու, Բալց սքանչելի իմն ասէ պատմագիրն, թէ ի լուսվ տեղիս գտան բնակեալ ի մարդկանէ լերկը իս մերում ցան և ցիր սակաւք լառաջ քան զգալուստն ընկին մերու նախնոյն Հայկալ։ Այս հատուածներց երեւում է, որ ինքը Խորենացին չէ համարում հայերին Հայաստանի բնիկ, նախնի բնակիչներ—աբորիգեններ կուզեմ ասել..

Մենք իր տեղում նկատեցինք, որ Խորենացին իր պատմածները (Նրա կարծիքով պատմական) հաստատելու համար առաջ է քերում ազգային երգերի նշխարքը, նշանացի առնելով աւանդութիւնների վրա, որք լսվում էին նրա ժամանակներում։ Զը նայելով ժողովրդական մտաց ալս վաստակներին, որոնց ուղղակի մտանացոյց է տռուում նա, եթէ ուշադրութիւն դարձնենք նրա ոճի և մեկնութեանց ձեւի վրա, — մինչեւ անդամ այն գլխներում ևս, որոնց Մար Աբասից է նա փոխառնում, — մենք կը գտնենք աներկբայելի բանատեղծական ծագման լատկանիշներ։ Այս է պատճառը, որ մենք պնդում էինք, — ասում է ալ. Պատկանեանը, — թէ Մար Աբասը ոչ թէ նինուէի դիւանից, այլ իր ժամանակակից ժողովրդային աւանդութիւններից էր քազում Հայաստանի հին պատմութեան ազբիւրը։ Նեղինակը նկարագրում է իր դիւցազներին, որք եղել են Քրիստոսից առաջ աւելի քան 2000 տարի, այնովիսի խօսքերով, որոնց մէջ անկարելի է ըստ նկատել հին աւանդութիւնների բանաստեղծական հետքերը., Ահա թէ որպիսի անուններ է տալի նա Հայկին. «գեղասլատշաճ և անձնեալ, քաջագանգուր, խալտակն և հաստաբագուկ, սա ի մէջ սկայիցն քաջ և երեելի լեալ. ընդիմակաց ամենեցուն, որք ամբաւնալին զձեռն միապետել

ի վերալ ամենայն սկալիցն և դիւցազանց »... Տիգրանի վերաբերմամբ զրում է՝ «խարտեաշու ալս և աղէքեկ ծալրիւ հերաց Նրուանդեանս Տիգրան, երեսօք զունեան և մեղուակն...» Նոլնը լալտնվում է Շամիլամին և Աժդահակին ընծալած գլխներում... Քանի որ աւելի և աւելի մօտենում ենք Խորենացու ժամանակին, այնքան աւելի ստէպ ենք պատահում նշա արած ակնարկութիւնների հետ ժողովրդալին վիպասանութեանց վրա: Օրինակի համար՝ «Արտաշիսի (89 – 129 Քրիստոսից յետ) վերջնոյ գործք՝ բազում ինչ լալտնի են քեզ (Սահակ Բագրատունուն) ի վիպասանացն, որ պատմեն ի Գողթան... այս ամենայն, որպէս ասացաք, լալտնի են քեզ յերգս վիպասանացն, բայց լիշտատկեսցուք և մեք կարճառօտիւք, և զալլաբանութիւնն ճշմարտեսցուք»: Այս լիշտատկելը և ճշմարտելը կայանում է նրանում, որ նա ժողովրդալին վէպի բովանդակութեան կմախքն է մեզ հաղորդում, անուանելով նրան պատմութիւն: Արանից յետոյ դիւրին է Հասնել այն եզրակացութեան թէ՝ Հալաստանում ի հնումն եղել են պատմական և վիպական երգեր, եղել են մինչեւ անգամ նոյն իսկ Խորենացու ժամանակում և մանաւանդ՝ գինաւէտ և բարեբեր Գողթան գաւառում:

Մար Աբասի պատմած աւանդութիւնները, որք տեղ են գտել Խորենացու պատմութեան մէջ, նրա IX – XV դլխներում, այս աւանդութիւնները – ասում ենք – նաև նրանց ծագումն և լաջորդութիւնը քաջ ըմբռնելու համար, պատկառելի պլրօքեսօրը ենթագրութիւն է անում: Նա ասում է. քառեակ, եթէ ոչ աւելի, – առանձին ասացուածների կամ աւանդութիւնների համախմբութիւններն են եղել աղբեւը Մար Աբասի հալոց նախկին պատմութեան համար: Խոկ լիակատար հալոց պատմութեան անագանեղ յօրինողի գրչի տակից այս չորս վիպասանական համախմբութիւնները արհեստապէս փոխագարձ շաղկապուած են դուրս եկել:

Ալս քառեակ վիպասանական համախմբութիւններին (ԱԿԲՈՒ) նա վերաբերում է.

1) Արմենակի, Արմէն ցեղի նահապետի, և նրա յաջորդների վրա ասացուածները: Գործողութեան տեղը՝ Արաքսի գետաբերանից սկսած դէպի արևելք—մինչև Նախիջևան, բուն Արմէնիա, սկզբում՝ Ալրարատեան աշխարհ, վերջում՝ այն երկիրները ևս, որք Արաքսից դէպի հիւսիս են և մինչև ալդ գետի Կուրի հետ խառնուելը:

2) Հայկի, Հայոց ցեղի նահապետի և նրա յաջորդների վրա ասացուածները: Գործողութիւնը կատարվում է Հարաւալին Հայաստանում, Վանալ լճի շրջակալքում, Խորենացու և սեմականների Արարատը, ասորեստաննեալց արձանագրութիւնների Աւրարտուն:

3) Արամի վրա ասացուածները, որպէս Հայոց պատմութեան պատերազմական մեծագործութեանց և աշխարհակալութեան շրջանի դիմառնումն, և Հայաստանի, որպէս քաղաքական մարմնով սահմանների նշանագրումն:

4) Ասացուածներ Արալի վրա, որի կեանքը շաղկապած է Հայոց հարաւալին աւանդութիւնների հետ Շամիրամի վերաբերութեամբ:

Ենթագրենք թէ՝ պատմական ժամանակներից առաջ՝ մի որ և է ժամանակ՝ տիրապետում էին ամբողջ Հայաստանի տարածութեանը երկու ցեղ. Հիւսիսում, Արաքս գետի ափերի վրա, Արմէնները, իսկ Հարաւում՝ Վանալ ծովի եղերքում՝ Հայերը: Արմէնները իրենց ասացուածներում հանում են իրենց ծագումը Արմենակից *), հայերը՝ Հայկից: Անցնելով

*) Սերէոսի ակնարկութիւնը և Ներսէս Շնորհալու ուղղակի հաստատութիւնը՝ որ «Յիսուս որդի» բանահիւսութեան մէջ ասած է. «Հայկ զԱրմենակ որդի ծնեալ» Արմէն ազգ մէր Արմէն կոչեալ:

Արաքսը և լալնացնելով իրանց սահմանները, արմէնները պիտի ընդհարուէին հայոց հետ հարաւային Հայաստանում։ Դրական ազգիւրներից մեզ ոչինչ յատնի չէ թէ՝ ինչ հետեւանք ունեցաւ այս ընդհարումն Երևի, շատ հաւանական է, որ արմէնները յաղթուեցան հայերից, որոնց ազգային անունը գառնում է ընդհանուր երկու իսկ ցեղի համար, այնպէս որ արմէնները և հայերը սկսում են անուանել իրանց մի և նոյն հայ անունով։ Յայերը և պարսիկները, որք ծանօթ էին արմէնների հետ առաջ էլ, շարունակում են տալ նրանց նոյն իսկ ցեղալիին, Արմէն, անունը, որպէս ալժըմ մենք ենք անում ունդարների հետ, կոչելով նրանց ունդարներ, թէ և իրանք, խառնուելով մաճառների հետ, վաղուց է որ գադարել են համարել իրանց ունդար...

Երկու ցեղերի միանալը՝ ի մի քաղաքական ամբողջութիւն պիտի արտագատուէր ժողովրդային աւանդութիւնների սերտ միաւորութիւնից... Եւ որովհետեւ Արմէնները Արմէնակին էին համարում իրանց նահապետ, իսկ հայերը Հայկին, ուրեմն՝ ըստ բանաստեղծական ճշտութեան օրէնքների պահանջմանց՝ Արմէնակը և նրա յաջորդները պիտի խառնուէին Հայկի և նրա ընտանիքի հետ։ Այս երկու ընտելացած ասացուածների որ նախնանունը (ԹՈՒԻՄ) պիտի բռնէր առաջին տեղը։ Յայտնի բան է — Հայկը, որովհետեւ հայերը Արմէնների հետ ունեցած ընդհարումներից յաղթող են գուրս եկել (ենթադրութիւն), երկրորդ՝ որովհետեւ արմէնները սկսան անուանուել հայ, թողնելով օտար ազգերի կամքին տալ իրանց նախկին՝ արմէն՝ անունը։ Ընդունելով հայ անունը, ի հարկէ, նրանք իրանց նահապետ պիտի շինէին Հայկին և պիտի հանէին սրան իրանց նախնի ցեղապետների գլուխը, իսկ իրանց հարազատ նախնանունը դնել նորի կոչման տակ, կամ կոչել նրան Հայկի որդի։ Այսպէս իսկ վարուեցան։ Թէ այդ չէ եղել նախկին ասացուածներում, երեսում է նրանից, որ

Արմենակը և նրա լաջորդները գործում են բոլորովին այլ տեղերում, այսինքն՝ Արաքսի ափերում, և ոչ այնամեղ, որտեղ էին Հայկը և սրա որդիքը՝ Կազմոս, (sic) Խռու, Մանաւազ և այս վերջինի որդին, Բազր, — հարաւային Հայաստանում, Վան լճի շրջակալիքում։ Խորենացին (գր. Ս., գլ. V) հաշւում է Հայոց աղջաբնակութիւնը ըստ Աբիւգենոսի *), ցածից գեղի վեր այսպէս՝ «Արայն գեղեցիկ՝ Արամեալ, Հարմեալ, Գեղամեալ, Ամասեալ, Արմալիսեալ, Արամենակալ, որ եղեւ և այլն... Այս շարքում Արմենակի սերունդներին ենք միայն պատահում, իսկ Հայկի և նրա սերունդների վրա ոչինչ չէ առում։ Սրանից կարելի է եղբակացնել թէ եղել է և մի ուրիշ Հայոց աղջաբնութիւն առանց Հայկի։ Հաղորդելով Հայկի գաղթականութիւնը Բարիլոնից, ան ագանեղ տարեգիրը գիտաւորութեամբ աւելցնում է թէ՝ Հայկը հեռացաւ Բարիլոնից լետ ծնանելու զորդի եւր զԱրմենակ... Այս Հաւաստիքով տարեգիրը կամեցել է անբողքապէս կապել Արմենակի տոհմը Հայկի տոհմի հետ... Բայց, ըստ Սերեսոսի, Հայկը գաղթում է Բարիլոնից, երբ ծնվում է Արայ գեղեցիկն անգամ, ուրեմն՝ Հայկը գաղթում է դեպի Արարագ իր տասը սերունդի հետ... Ակներեւ է որ Կազմոսը Հայերի հնագոյն ասացուածներում Հայկի անդրանիկ որդին է եղել, իսկ Արմենակը լետով է մտցրած Հայկի ու Կազմոսի մէջ։ Անքեսոի խմբագրութեամբը Կազմոսը իրկու անգամ անուանուած է Հայկի թուռան, իսկ մի անգամ ուղղակի Հայկի որդի։

Արանից լետ լարդելի պրօֆէսորը ընդարձակ տեղ է տալի հետեւեալ անունների մեկնութեանցը. *) Հայեր, Արմէն-

*) Ենթադրենք թէ՝ իրաւ այդ տեղը գտնվում էր Երիւգենոսում։

**) Ը. յա առարկայի նկատմամբ կառաջարկենք նոյն հեղինակը „Несколько словъ о названиихъ древнихъ Армянскихъ мѣсяцъдовъ“ Спб. 1871.

եր, Թողովոմեան ազգ, Թողուրմ, Մագոդ... Արարատ, Արարատ. Արարադ և Արարադ: Բանը նրանումն է, որ Խորեացու թարգմանիչներից և մեկնիչներից մի քանիսը խառնել են մէկզմէկու հետ Արարատ և Արարադ խօսքերը, իսկ Փառլստոս Բիւղանդացու գաղղիներէն թարգմանիչը, պլ. Էմին, Արարատի տեղ է ընդունել Սարարատը (le mont Ararat le Masis des Arméniens), վերագրելով Արարադ բառը սրբագրողի սխալմանը (տ. Collect ses histor. և այլն 1. p. 218): Այս խօսքերի մեկնութիւններից լետով պլ. Պատկանեանը զրակացութեանց է գալի:

ա. Ալլարատ լայտնի աշխարհ է Արաքս գետի կողմերում և նրան չը պիտի խառնել Արարադի հետ:

բ. Աստուածաշնչի Արարատը և ասօրիների Արարադը սիմական հեղինակների մօտ նշանակում է Հարաւային Հայաստանը հանգերձ Քուրդստանի լեռներով, որք բաժանում են Հայաստանը Միջագետքից:

գ. Սարարադը, որի վրա ըստ առօրի աւանդութեանց, նստաւ Նոյեան տապանը՝ չէ Մեծ Արարատը, այլ Հարաւային Հայաստանի լեռների մի գագաթն է:

Բայց գառնանք կրկին Խորեացու պահած աւանդութիւններին «...լեռ ծնանելու զորդի իւր զԱրմենակ՝ ի Բարիլոնի, չու արարեալ զնաց յերկիրն Արարադալ...» Բարիլոնը այստեղ որտեղից մէջ ընկաւ, պատահմամբ, թէ ստուգիւ եղել է նա աւանդութեան մէջ: Մենք յօժար ենք կարծելու վերջինը, նշմարելով նրա մէջ ակնարկութիւն լատուկ պատմական իրազութեան վրա: Հին—Ասորեստանեալի արձանագրերը Հայաստանի ընակիչներին Ուրարտա անունն են տալի: Այս անունի փոխարէն ստէսլ գործ են ածում մի ուրիշը ևս, որը կարգաշվում է Ակկադի (տ. Սարգ. արձ. 1. 21) նոյն իսկ արձանագրերի մէջ արա վերջին անունով կոչվում էին նոյնպէս Բարիլոնի ոչ սեմական ընակիչները: Այս հան-

գամանքը ցոլց է տալի հարաւալին Հալաստանի բնակիչների աջակցութիւնը հին բարելացիների հետ; Եթէ այս, Ակկադի, անունը փոխենք, մի այլ՝ աւելի լալտնի՝ անունով, Քաղդեացի, մենք կը գանք նոյն իսկ եզրակացութեան: Աւելորդ է երկարացնելթէ քաղդեացիք Բարելոնի հին բնակիչներն էին *)... Ալպէս մենք տեսնում ենք, որ Միջագետքի հիւսիսային և Հարաւալին ծայրերում բնակվում էին մի և նոյն ժամանակ նոյն իսկ ցեղի երկու ճիւղը և կոչվում էին մի անունով.... Գլխաւորը այն է, որ նրանք, ըստ երեսութին, ընդունում են այդ ազգակցութիւնը: Մենք կարծում ենք, ասում է ալ. Պատկանեանը, — որ Հարաւալին Հալերի (Ուրարտա) ու Բարելացիների այս աջակցութեամբն է Հարկաւոր մեկնել այն Հանգամանքը, որի վրա խօսում է Դարեհ իր Բիսուտառնի արձանագրում (Bh. III. 75—81 Spieg) ալսինքն Հալերի ապստամբութիւնը Բարելոնում. «Ասում է Դարեհ արքայն՝ այն ժամանակ, երբ Պարսկաստան էի և Մարաց երկրում, բարելացիք երկրորդ անգամ ապստամբուեցան ինձ դէմ: Մի մարդ, Արակ անունով, Արմէն, Դանդիտալի որդին նշկահեց ինձ: Կայ Բարելօնում Դուբանալ վայր, որտեղ նա նշկահումն սկսեց: Նա ստում էր և ասում. Ես Նարուկուդրասարա, որդի Նարունիդի եմ: Այն ժամանակ Բարելօնի բնակիչները անջատվեցան ինձանից և անցան Արակի կողմը: Նա տիրեց Բարելոնը և գառաւ Բարելոնի արքալ...»

Բարելացիների անկախութեան սէրը լալտնի է ամենին,

☞ Այս խնդիրը աւելի մանրամասնորէն աշխատասիրուած է ի Essai de Commentaire des fragments cosmogoniques de Beroeze par Lenormant, Paris, 1872 p. 48—55.

**) Արձանագրի բովանդակութիւնը տ. ալ. Կոսսօվիշի—Inscriptiones-Palaeo-persicae Achaeme niadarum Petrop. 1872 p. 35—36 Inscrif. Behistani III, 13—14: Նոյնպէս Journal of R. Asiatic. Society.

որք իմաստասիրել են նրանց, վերջին ժամանակներում լոյս տեսած, պատմական հաւաստի լիշտառակները: *) Ասորեստանցիների տիրապետութեան ժամանակներում տասնեակ անդամներ լոտի են կանգնում նրանք ընդդէմ Ասորեստանի և, հնազանդելով միայն ոլժին, ընդունում են նրա զլխաւորութիւնը: Իսկ եթէ նոյն իսկ բարելացիները լոժարակամ համաձայնուեցին ընդունելու Արակին իրանց թագաւոր, ուրեմն՝ աներկրայելի է որ՝ այս անձնաւորութիւնում տեսնում էին նրանք իրանց քաղդէացուն: Այսպիսի փաստը, յենուելով ուրիշ կողմնակի հանգամանքների վրա, ստանում է ծանրակշեռ նշանակութիւն Ուարտու և Բարիլոնի քաղդէացիների ազգակցութեան հարցումը.... Եւ եթէ աւանդութիւնը մտարերել է այս ազգակցութիւնը և արտալայտել է այս իրողութիւնը Հայկի Բարիլոնից գէպի Արարագի լեռները գաղթելումը—կատարել է այն, ինչ որ պիտի անէր ժողովրդային աւանդութիւնը. այսինքն՝ իր կամեցածի պէս լուսաւորել է իրողութիւնը և նրա պատճառը....

Բէլի ու Հայկի պատերազմը Արարագում ալսպէս է մեկ-
նում մեր պատկառելի հիղինակը:—Յալտնի է, զրում է նա,
—որ Բէլ Բարիլոնում և Ասորեստանում պաշտված բաձրագոյն
դիցերից մէկն էր: Ասորեստանցիները կոչում էին իրանց
Բէլի ազգ: Ասորից յետ **) անմիջապէս նրա անունն էր
բացականչվում.... Իսկ Հայերը անուանում էին իրանց Հայ-

*) M. Lenant, Annales des Rois d'Assyrie, Paris, 1874 p., 53: Տ. նմանապէս Hur. lenormant, *les premières civilisations*, t. II, 1884 զԼուխ՝ Un patriote babylonien du VIII siècle avant notre ère, հմ: 203—309

**) S. J. Rawlinson, The five great Monarchies of the ancient eastern World. Second Edition, London 1871 II, հմ.
12—14: նոյն հեղինակինը, History of Herodotus New Edition, London, 1862, vol 1, p. 488—493:

կի որդիներ: Հայկ աստղաբաշխութեան մէջ նշանակում
Օքիսնի համաստեղութիւնը և շատ կարելի է որ այս անուն
ի հնումն ունեցել է դիւցադնական ևս նշանակութիւն, որ
ովէս Ասուրը և Բէլը: Կարգալով ասորեստանցիների արձա
նազրերում նրանց լարատե արշաւանքները Ուրարտայ աշխար
հի վրա, ակամալից նշմարում ենք՝ քերթողի վիպական պատ
մածներում Բէլի ու Հայկի սքորմանց վերաբերմամբ՝ իսկա
կան աւանդութիւն—անվերջ և դարեւոր տեած պատերազմը
ասորեստանցիների. և Հայերի մէջ: Այդ աւանդութիւնները
չեն անհետացել ազգի բերանից մինչեւ մեր ժամանակները
անդամ: Նոյն իսկ տեղերում, ալսինքն՝ Վանայ լճի շրջա
կալքում, Բէլու բնակիչները համարում են իրանց գիւղը
Բէլի թաղուած տեղը: Փոքր ինչ դէպի հիւսիս, նոյն լճի
արեմտեան եզրում, գտնվում է Ներբուզի լիառն (մտարե
բեցէք Բէլ Ներբուզի) և ալստեղ իսկ գտնվում է բաւակա
նին խոշոր քարերի մի շարք: Սրանց վերաբերմամբ բնակիչ
ները պատմում են թէ սրանք Ներբուզի թագաւորի ուղ
տերն են եղել: Այս Ներբուզը ուզեցել է Աստուած դառնալ
և թէ իրը ճշմարիս Աստուածը քար է դարձրել նրա ուղ
տերին, իսկ ինքը՝ Ներբուզ զահավէժ կորել է ի վիհս եր
կրի (?): Ուրեմն աւանդութեան և այս մասը պատմական
հիմք ունէ....

Խոռ, Մանաւազ, Բաղ անունները ստեղծված են Հե
տեեալ աշխարհագրութեան անունների մեկնութեանց համար.
Խոռխոռունիք (ասորեստանցիների կհար կհար-ը) Մանաւազ-
եան և Բգնունեանց կալուածքներ, Մանաւազակերտ: Այս
ամեն լիշած տեղերն Հայկի նուաճեալ տեղերն են: Այս ա-
նունների շարքում Կաղմաս անունը շատ օտարութիւն է լսվում
մարդու ականջին իր լունական վերջաւորութեամբ, նաև իր

*). Ներսէս Սարգիսեան Տեղեկագրութիւնք ի Փոքր և ի Մեծ
հայու: Վ.Ե. 1864 հմ. 251. 274.

ակներև սեմական ծագումովը: Կ ա դ ի մ հ ր է ա ե ր է ն ն շ ա ն ա կ ու մ
ա ր ե ւ ե լ ք, ի ս կ լ ո ւ ն ա յ ա ւ ա ն գ ու թ ի ւ ն ն ե ր ու մ, Կ ա դ մ բ ն չ ա -
ա կ ու մ է Փ ի ւ ն ի կ ե ց ի ն ե ր ի զ ա ղ թ ա տ ե ղ ի ն ն շ ու ն ա ս ա տ ա ն ո ւ մ: Ա յ ս
ը կ ու վ ե ր ջ ի ն մ ե կ ն ու թ ի ւ ն ն ե ր ը մ ե զ հ ա մ ա ր կ ո ղ մ ն ա կ ի մ ի ա լ ի ն
շ ա ն ա կ ու թ ի ւ ն ո ւ ն ե ն, — բ ա ն ը ն ր ա ն ո ւ մ ն է, ո ր Հ ա յ կ ի տ ո հ ո -
տ կ ա ն ե ր կ ի բ ն ե ր ը ս տ ա ց ե լ է Կ ա դ մ ո ւ ր, ո ւ ր ե մ ն՝ հ ա յ ո ց ս կ զ բ -
ա կ ա ն ե ր կ ի ր ը, Ա ս ո ր ե ս տ ա ն ի հ ի ւ ս ի ս ո ւ մ, ս ր ա ա ն ո ւ ն ո վ պ ի տ ո ր
ո չ վ ա ծ լ ի ն է ր: Կ ա դ մ ե ա ն ի շ ի ս ա ն ո ւ թ ի ւ ն ը տ ե լ է ե ր կ ա ր ժ ա մ ա -
ա կ ի և Խ ո ր ե ն ա ց ի ն ք ա ն ի ց ս ա ն գ ա մ լ ի շ ո ւ մ է, ե ր բ խ օ ս ք ը գ ա լ ի ս է
Խ ո ր ե ս տ ա ն ի հ ա ր ե ա ն հ ո դ ե ր ի վ ր ա. «Ե ւ ք ա ն գ ի զ ա ր ե ւ ե լ ե ա ն ն և
հ ա ր ա ւ ա լ ի ն ն ն ո ւ ա ն ե ա լ (խ օ ս ք ը Ա ր ա մ է ի վ ր ա է) ի ձ ե ռ ն յ ա ն ձ -
ե ա լ է ր ե ր կ ու ց ե ղ ի ց ս ա լ ո ց ի կ ս ի ս ա կ ե ա ն ց ն զ ա ր ե լ ս և
ը ք ի Կ ա դ մ ե ա տ ա ն է ն զ ա ս ո ր ե ս տ ա ն ի ն . . . (գ ր. ա. դ լ. VII):
ա դ մ ե ա ն «տ ո ւ ն ը» լ ի շ վ ո ւ մ է Խ ո ր ե ն ա ց ո ւ ց Վ ա ղ ա ր շ ա կ ի և ս,
յ ա տ մ ա կ ա ն ժ ա մ ա ն ա կ ո ւ մ: Ա ր ա ն ի ց լ ե տ ո լ հ ա ս կ ա ն ո ւ ի է գ ա ռ -
ո ւ մ ի ն չ ո ւ տ ա ր ե գ ի ր ը (կ ր կ ն ե լ ա վ ք ե ր թ ո ղ ի խ օ ս ք ե ր ը) Կ ա դ մ ո -
ի ն թ ո ղ ն ո ւ մ է Հ ա յ կ ի ն ա խ կ ի ն ե ր կ ր ո ւ թ ը և չ է տ ա ն ո ւ մ ն ր ա ն
է պ ի հ ի ւ ս ի ս Ա ր ա ք ս ի պ ի ե ր ը. Կ ա դ մ ո ւ ր հ ա ր կ ա ւ ո ր է ե զ ե լ
ր ա ն «Կ ա դ մ ե ա ն տ ա ն » ա ն ո ւ ն ը մ ե կ ն ե լ ո ւ լ հ ա մ ա ր . . .

Գ ա ն ք Ա ր մ ե ն ա կ ի ն, Ա ր մ է ն, Ա ր մ է ն ի ս խ օ ս ք ե ր ի ն ա խ ն ա -
ո ւ ն ի ն, ո ր ի ն տ ա ր ե գ ի ր ը ա ն ո ւ ա ն ո ւ մ է Հ ա յ կ ի ո ր դ ի: Մ ե ն ք
ե ր ե ք ս ա ս ա ց ի ն ք թ է Ա ր մ ե ն ա կ ը ն ա խ կ ի ն ա ւ ա ն դ ո ւ թ ի ւ ն ն ե ր ո ւ մ
ո պ ի տ ի ո ր ա զ գ ա կ ց ո ւ թ ի ւ ն ո ւ ն ե ն ա ր Հ ա յ կ ի հ ե տ և թ է
ր հ ե ս տ ի ւ է մ տ ց ր ա ծ ս ր ա ա ն ո ւ ն ը Հ ա յ կ ի ո ւ Կ ա դ մ ո ս ի մ է ջ . . .

Ա ր մ ե ն ա կ ի գ է պ ի Ա լ լ ր ա ր ա տ ե ա ն ե ր ի ր ը գ ա ղ թ ա կ ա ն ո ւ -
ե ա ն ը ո ս լ է ի ց, ա լ ո ս ն ք ն, ե ր բ՝ «ա ռ ե ա լ զ ա մ ե ն ա յ ն բ ա զ մ ո ւ -
ի ւ ն ն ի ա զ ա լ ի ա ր ե ե լ ս հ ի ւ ս ի ս ո լ, և ե ր թ ե ա լ ի ջ ա ն է ի խ օ ր ի ն
ո շ տ ա վ ա յ ր ի մ ի ո լ » և ա յ ն, — ա լ ո ս լ է ի ց, ա ս ո ւ մ ե ն ք, — վ ե ր -
ա ն ո ւ մ ե ն տ ա ն դ ո ւ թ ի ւ ն ն ե ր ո ւ մ հ ա յ ո ց հ ի ւ ս ի ս ի ա մ ե ն ա լ ն
ո չ յ ա ր ա ր ե ր ո ւ թ ի ւ ն ն ե ր ը հ ա ր ա ւ ի հ ե տ Ա լ լ ր ա ր ա տ ե ա ն ա շ -
ա ր հ ը, ո ր ը ա մ ե ն ժ ա մ ա ն ա կ ն ե ր ո ւ մ հ ա մ ա ր վ ո ւ մ է ր Հ ա յ ա ս -

տանի սիրտը ու կենտրօնը, մօտաւորապէս գտնվում է Ալիայ-չալից սկսած մինչև Դեղամալ ծով) Արաքս երկու խոկ տփերի վրա, ոտկայն աւելի դէպի հիւսիս, քան Հարաւ: Այս է Հալերի (Արմէնների) տոհմական երկիրը: Այս աեղից մենք ողիտի դիտենք նրանց բազմանալը, նրանց զանազան կողմեր գտղթելը և նրանց աշխարհակալութիւններ անելը, կալուածքներ ձեռք բերելու համար: Այն երկիրները որք կարգաւ մտնում են տյու նորածին տէրութեան տարածութեան մէջ, ընկնելով կենտրօնական իշխանութեան կանխման տակ, նպաստամատուց են լինում Արմենակի ու ըրունուների ազգարանութեան կազմութեանը: Ռիշ խօսքավ՝ ազգարանութեան ցուցակի ամեն մի նոր անունը ցոյց է տամեզ նորանոր հողերի լաւելմունքն ըուն երկրի վրա: Նկատողութեան արժանի է նաև այս հանգամանքը: Նահատեսողիքը ըստանում էն հալբենիքին հարեւան տեղերը, տալ նրանց իրանց լաւագակ անունները, թուներն էլ նոյնն եւ անում դորզն ինչ հեռի երկիրների հետ... Խնչքան որ հեռ է նոր լարակցեալ երկիրը ցեղի նախկին հալբենիքից, այնքան նրա ներկայացուցիչը, որից ստացել է իր անունը, հեռ է նահատետի ազգարանութեան շարքում: Եթէ երկու երկիր կտո՞ւ երկու քաղաք մէկզմէկու կից են, ուրեմն, ժողովրդայի մլատմտկան օրէնքով, նրանք կառուցուած են կամ ընակեց ըած են երկու եղբայրներից ։ Եթէ նոր ստուգա ու զույգա ։ Եթէ որդի նորա (Արմէնակի) Արմալիս շինէ իւր տուն ընակութեան... անուանէ զնա լիւր անուն Արմաւիր... Եւ զորդին իւր դնարայ... առաքէ... ի գաշտ մի մօտաւոր... ի թիկունս հիւսիսով լերինն, որ անուաննեցաւ Արագած, լորու անուն և զգաւառն ասեն անդւանել Եիրակ: Ի Հարկէ, մեկնում է լարգելի պրօֆեսօրը, — Արմաւիր և Եիրակ անունների ծագումն Արմալիս և Եարայ անուններից թէեւ այնքան ստոյգ մեկնութիւններ չեն, բայց չը պիաի մոռանանք, որ

նոյն իսկ ազգիւրներն հասել են մեզ ասորի և ոչ հալոց ազգիւրներից...

Հայաստանի գետը, այն գետը, որ անցնում է հայերի տոհմական երկրից, այն գետը, որի եզրումն է կառուցած Արմավիրը գեռ անուն չունի: Նա սպասում է Արմալիսի թռուան ծննդեանը, Արաստալին, որի անունով վերջապէս կնքվում է Երասմ (Գեհոն)...

Արմալիսին յաջորդում է նրա անդքանիկ որդին՝ Ամասիան: Այս վերջինը չորս որդի է ունենում՝ Արսափոյ, Գեղամ, Փառոխ և Ցոլակ: Արսափոյ իր գերը կատարելուց յետով, ալսինքն՝ Երասմին իր անունը տալից յետ, անհետանում է աւանդութիւնից: Ինչ էլ վերաբերում է Փառոխին և Ցոլակին, ակներեւ է, որ այս անունները ստեղծված են եղել Փառախոտ և Ցոլակերտ քաղաքների, թէ գիւղերի, անունների մեկնութեանց համար: Բացի այդ՝ ինչպէս երեւում է այս երկու անունները յետով են մտցրած Արմենակի սերունդների շարքը: Կարդանք, ինչ է գրում Սերէոսը: «Ի Դամասկոսէ, հաղորդում է նա, — ասեն գնացեալ զՄարսեակն զբնդինն Արբահամու փախստական լեալ լիսահակալ, և եկեալ ընակեցաւ առ ոտամք երկուց լերանցն որ հալին հանդէպ մեծի դաշտին Արալի, լԱրագած կատար և ի Գեղ լեառն Եւ անուանէ զլերինս յանուն իւր, որում Ազատն կոչեն լեառն: Եւ լինին նորա երեք որդիք, Փառոխ նա է Եղիսաբար, և Փառոխա՝ կոչեն զտեղի ընակութեանն, և Փառականն դաշտ որսոց և արշաւանաց նոցին, որ խառնին յազգ Արամենակալ:» Ամասիան էլ մի երեւելի գործ չէ կատարել, բացի նրանից, որ իր անունը տուել է Մասիս սարին, թէև մի մեծ նմանութիւն չենք գտնում այդ երկու խօսքի (Ամասիա և Մասիս) մէջ... Իսկ Սերէոսի խօսքին (իհիմ) նալելով, Ազատ լեառն ստացել է իր Մասիս անունը վերոյիշեալ Մարսիակից, Արբահամի ընդունից: Ինչ և իցէ,

երկու իսկ մօտաւորութիւններն էլ արժեն մէկզմէկու..

Մինչև հիմա հայերը բնակվում էին, ինչպէս տեսանք, Ալրարատ գտաւառի մի մասնում՝ Ղարս-ջալից ակսած մինչև Գառնի-ջալը և Ակմանգանը, Արաքսի ականց երկու իսկ եղեքում: Բնակիչները բազմանում են և նրանք, հայերը, սկսում են զգալ իրանց—այսպէս ասած—Թրանց ոահ օստե ուր բնակված էին անդալտ ազգեր, Մարտց հպատակները: Հասկանալի է, որ հայերը հարկադրված են եղել Արաքսի ընթացքով դէպի արևելք երկիրներ նուաճելու: Տարեդիրը ասում է՝ «Ե ինքն (Գեղամ) գնաց միւս լերամբն արևելեան հիւսիսոյ, լեզր ծովակի միոյն: Եինչ զեզր ծովակին, և թողու անդ բնակիչն: և յիւր անուն և սա զլեառնն անուանէ Գեղ և զշէնսն՝ Գեղաքունի, որով կոչի և ծովն»... «Ի ձորակի մի ամբողջ շինէ ձեռակերտ մի, և կոչէ զանուն նորա Գեղամին... Այս յատուկ անունները, ըստ հայոց լեզուի յատկութեանց հարկաւոր է փոխել (տրանսկրիոնութեան) Գելամի, Գելակունի, Գել,—այնպէս որ—կարծես—սրանց մէջ պահպել է Գելաց յիշատակը, որոնց հայերը արտաքսել են դէպի Կասպից ծովը, որտեղ մինչև ալժմու-էլ կալ մէկ գաւառ Գելան անունով: Գեղամին, որ յետոյ, ասում է տարեգիրը,—ի Գառնիալ թոռանէ նորա (Գեղամի) անուանեցաւ Գառնի: Գառնի անունը պահպել է մինչև օրերս Գառնի-ջալի անունում:

Աստ (Գեղաքունի քաղաքում) ծնաւ զորդի իւր զՍիսակ... Սմա զմեծ մասըն լընչից իւրոց տուեալ... սահմանս հատանէ նմա ժառանգութեան (իրան չը պատկանող երկիրները) ի ծովէն ընդ արեւելու մինչև ցդաշտ մի, որ գետն Երասիս հատեալ զքարանձաւս լերանց՝ անցանէ ընդ խոխոմաձիգս և նեղս, ահադին գընդընչմամբ իջանէ ի դաշտ: Աստ բնակեալ Սիսակ, լնու շինութեամբ... և

զաշխարհն կոչէ իւրօվ անուամբ Սիւնիք, այլ
պարսք լըստակագոյն իսկ Սիսական կոչեն։ Արա-
նից լեռոյ հարկաւոր է սպասելու որ հայերը լառաջ պիտի
խաղան նուաճելու Արցախը, Աւտին և Փալտակարանը, որք
ի միասին հայոց Ալբանիայ են կոչվում կամ, ինչպէս հա-
յերս անուանում ենք Աղուանք, պարսիկների Յուանը, Այդ-
պէս և իսկ եղել է Խորենացին (գր. բ. գլ. VIII) պատ-
մում է՝ «լեռ սորա մեծ և անուանի և բազմաբիւր զարկե-
լից հիւսիսոյ կողմանն կարգէ (Վաղարշակի վրա է իսուքը)
կողմնակալութիւն՝ զար անուանի և յամենայն գործ մտա-
ւորութեան և հանճարոյ առաջինն զԱռան (այս երկրի
պարսիկներից տուած անուանի մեկնութիւնը)... և աշխարհն
յանուն քաղցրութեան ըարուց նորա կոչեցան Աղուանք (հա-
յերից տուած անուանի մեկնութիւնը). զի աղու ձայնեին
զնա»։ Որպէս Սիսակը, նոյնպէս և Առանը հանդէս են գա-
լի ինչպէս նախնանուններ յայտնի երկրների և ոչ մեծնա-
ւորութիւններ. . .

Հարմալին յաջորդում է Արամը, Ալյսեղ կանգ է առ-
նում տարեգիրը և անցեալը կարձառուտ կրկնարանում, կար-
ծես մէկ շըջան է վերջացել։ Նա ասում է՝ «Այս Հայկ որ-
դի Թօրգումալ, որդւոյ Թիրասալ, որդւոյ Գամերալ, որդւոյ
Յարեթի, նախնի Հալաստանեաց։ և այս ազգք նորա և ծը-
նունդք և աշխարհ քնակութեան և ալլն։ Ակներեւ է, ա-
սում է մեր հեղինակը, —որ Հարմալով վերջանում է այն
վիպական համախմբութիւնը, որին մենք տուինք «Արմե-
նակի և սրա յաջորդների վրա ասացուածներ» անունը։ Ե-
րեւում է, որ Մար-Արասը յաջորդ հարստութեան նկարա-
գրութիւնը այն մատեանից չէ քաղել, որ Հրամ անաւ
Աղէքսանդրի ի քաղգեացուց քարբառու փոխեալ ի յոխեալ
ի յոյնն... ալլ ուղիշ ազրիւրներից... «...սակայն, ասում
է Խորենացին, —որպէս Մար-Արաս Կատինալ պատմէ, ի վա-

քունց ոմանց և լաննշանից արանց ի գուսանականէն այս
գտանի ժօղովեալ ի դիւանի արքունեաց»։ Ակնյալոնի երեւ-
ռում է, որ եղել է ամբողջ երգերի համախմբութիւն Արամի
և նրա փառաւոր պղպապետելոյ վրա, և Հէնց այս աղբեւր-
ներն են եղել, որ շատ կասկածաւոր են երեացել Խորենա-
ցու աչքին և նա, ըստ մշտական իր սպազմութեան, երկու
փոքրիկ գլխներում հաղորդում է մեզ այս երգերի կմախքը,
կարծելով թէ պատմութեան հիմունք է մեզ առաջարկում։
Այն անձը, լորոյ անուն և ամենայն ազգք զաշ-
խարհս մեր անուան են, որպէս Յանք՝ Արմէն և
Պարսիկք և Ասորիք՝ Արմնիք, արսինքն անձնաւու-
րութեան վերաբերմանը ընդարձակ պատմութիւնը թողնում
է ուրիշ ժամանակի և տեղի. թէ կամ իցիս՝ արտաքոյ
ալոսը կը գրոցս կարգեսցուք և կամ թողցուք.
ապա թէ ոչ ՚ի սմին: Եւ ինչու այդպէս, որովհետև ուրիշ
բան է, եթէ Արամի վրա լիներ զրուած այն մատեանում:
որը հրամանաւ Աղէքսանդրի և ալն, իսկ ուրիշ
բան է «փոքր» և «աննշան» վիպասանների պատմաները...
Եերէոսը բացի Արամի անունը լիշելուց՝ ուրիշ բան չէ պատ-
մում նրա վրա: Յայտնի բան է, որ Արամը պատմական անձ-
նաւորութիւն չէ, ալլ գիւցազնական, և ազգը պատկերա-
ցուցանում է այս անձնաւորութեան մէջ իր մեծագործութիւն-
ները, իր լաջողակ աշխարհակալութիւնները և Հայաստանի
սահմանների ծաւալումն այն ժամանակաշրջանում, երբ նա
իր ըուն հողերում անձկութիւն էր զգում: Մենք ճշգտպէս
չենք կարող որոշել թէ՝ ո՞ր ժամանակներումն էին կատար-
վում այս պատերազմները, բայց ճշմարիտը այն է, որ այս
պատերազմները մի մարգու զործ չեն եղել... Ժողովրդի
մտքում մնացել են միայն միզամած լիշտակներ այս պա-
տերազմների վրա, որք կատարվում էին այն ժամանակը,
երբ Հայաստանի մեծ մասը բռնտկալուած էր թէ Մարաց

ազգից, թէ Ասորեստանից և թէ Փոքր Ասխալի մի ինչ ազգից, Այն ժամանակը մօտաւորապէս ալիտի Համարուի X—VII դարեմ իջոցը: առ—^{անձնութեամբ} և նշան նույն ոյն:

Որպէս Հայկի պատմութիւնում մենք պատահում ենք Բելի, Բաբիլոնի կեղծ թագաւորի հետո նորսպէս Արամի պատմութիւնում գործ ունենք, Ասորեստանի առաջին թագաւորի, Նինոսի հետ: Այժմ ոչ ոք չէ համարում Նինոսին պատմական անձ... Այն, ինչ որ կատարել են անորեստանցիները իրանց պետական կեանքի վեց և եօթն դարերի ընթացքում, ալդ ամենը ընծալուած է Նինոսին և նրա կողմէ Շամիրամին, մինչդեռ իրանք ասորեստանցիները ոչ մի Նինոս թագաւոր չէին ճանաչում... Նրանք ունէին Նինոս աստուած, Բել Ներբովթի և Բելտիսի որդին, որի դրուազը դոմէշ էր մարդի գլխով:—(ա. Rawlinson—The great Monarchies. 1871, ոօջ. 1 թ. 131—134) Տոյ ակկադերէն նշանակում է տէր (և պարոն և աստուած մտքով) որին Միջագետքի սեմական ընակիչների լեզվում համապատասխանում է Վար, նոյն իսկ նշանակութեամբ: Լիտկատար Տոյ անունը կրվում է ալսպէս Տոյ—իր, որը նշանակում է՝ Նին անունով, ալսինքն՝ արք որի անունն է տէր իսկ ինչ էլ վերաբերում է այս անունի սեմական լիտկատար կոչմանը, գեաւարձանագրերում չէ պատահած, բայց սա ալլապէս, Երևի պիտի լինի՝ Վար—chém, նոյն նշանակութեամբ, ալսինքն՝ Բար անունով, տէր անունով: Այս անունի վերջին ձեզ պատահում է Հայոց հեղինակներում, Խորենացին (գր. ա. գլ. XIV) «Եւ զայս Բարշամ վասն արութեան իւրոյ քազում գործոց՝ աստուածացուցեալ պաշտեցին Ասորես ժամանակովս լոլովս»: Նոյնը՝ մէկ ուրիշ տեղ (գր. թ. գլ. XIV), «ինքն (Տիգրան) իջանէ ի Միջագետս, և գտեալ անդ զիարշամինայ զալատկերն, զոր ի փղոսկրոյ և բիւրեղէ կազմեալ էր արծաթով», Հրամալի տանել կանգնել լաւանին

Թորդան» : Այսաւարձանի վրա խօսում է և Ազաթանգեղոս
(Հմ. 585, Հայերէն) Բարձամնեաց անունով . . .

«Այս Արամ, ասում է Խորենացին, —ստկառօք աճօք
յառաջ քան զտիրելն Նինոսի Ասորեստանեալ և Նինուէի . . .
և վերջապէս ալս Նինոսը ծածկէ զշտութիւնն և Հրամալէ
նմա (Արամին) զարն իշխանութիւն անկասկածքար ունել.
և համարձակութիւն տալ նմա վարսակալ ածել մարզարտէ,
և երկրորդ նորա կոչելը . . . Թէ կազ Հայաստանում ասպա-
ցուածներ Արամի վրա, այդ աներկրակելի է, բայց թէ վե-
րաբերվում էին նրանք Նինոսի ժամանակին —յարտնի չէ:
Նինոսը ըստ Կտեսիասի (Գիոդ. II. 2) որշաւանք է անում
Հայաստանում, որի թագաւորը Բարզանեսը խոնարհվում է
նրա առաջ: Նինոսը ընդունում է նրան վեհանձնութեամբ
և պահանջում նրանից օժանդակ զօրք միայն . . . Մար Արամը
այս Բարզամէսի տեղ է գնում ժաղովրդակին աւանդութիւն-
ների դիւցազնին, Արամին . . . մայալ մ ու ու աւագանաւու

Արամից լեռոր գալիս է նրա որդին Արալ գեղեցիկն,
որի վրա կը խօսենք իր տեղում . . . Արդոսից, Արալի որ-
դուց լետոր, գալիս են 29 թագաւորներ մինչ Պարոյրը,
Սարդանապալի և Վարբակէսի ժամանակակիցը . . .

Մենք նախընթաց գլխում ասել ենք, որ Մարտերասը,
կամ նա, ով վարագուրվում է այդ անունով, աշխատասիրել
է պատմութիւնը թէ Նինուէի գիւանում, այլ քաղել է
ժաղովրդային վիպասանութիւններից, իսկ ինչ էլ վերաբեր-
վում է Մարաց և Ասորեստանի պատմութեանը առած է
Եւսեբիոսի ժամանակագրութիւնից — Եւսեբիոսը հաղորդում
է մեզ, որդէս զանազան հեղինակութիւնների նշխարներից,
որք ամբողջօրէն չեն հասել մեզ, նոյնպէս և Գիոդորից,
որը աշխատասիրել է Ասորեստանի պատմութիւնը ըստ Կտե-
սիասի: Ուրեմն՝ Խորենացին տառ առ տառ արտադրում է
Ասորեստանի և Մարաց պատմութիւնը Մար Արամից, սա —

Եւսերիոսի ժամանակագրութիւնից կամ ըսլաքավին նոյնանմանից: Եւսերիոսը, չը ծածկելով ալդ, փոխառնում է Դիորդորից և այլ տեղերից, իսկ Դիորդորը Կտեսիասից...

Դիորդին է ցոյց տալ թէ Խորենացու պատմածների ձեւը, Հայոց պատմութեան վերաբերմամբ, նաև սերունդների թիւը, նրանց լաջորդելու և իշխելով տեսղութիւնները:— Խօրինած է Կտեսիասի Ասորեստանի պատմութեան ձեռվ, որ պահուել է Եւսերիոսաւմ:

Հատ Եւսերիոսի (Արքւղէնոսի Chronica p. 38) դիւցադ նական թագաւորների ազգաբանութիւնը մինչև Նինոսը հետեւալն է. Բէլ, Բար, Աներ, Արքէլ, Խաալ, Արքէլ և Նինոս:— ընդամենը 7 հոգի:

Խորենացու պատմութիւնում Հայկից, Բէլի ժամանակակիցից սկսած մինչև Արամը, Նինոսի ժամանակակիցը, նոյնպէս եօթն նահապետների հետ ենք պատահում՝ Հայկ, Արծենակ, Արմայիս, Ամասիալ, Դեղամ, Հարմալ և Արամ:

Աշխարհակալ Նինոսին դիմագրուած է աշխարհակալ Արամը:

Նինոսից լետոյ թագաւորում է անպարկեցտ Նամիրամը, որին ժամանակամիջին արքին ժամանակակից է շինուած Մար. Արամը ողջ ախոհ Արամին:

Արանից լետոյ Ասորեստանում լաջորդում են մէկս մէկս լետեսից 30 թագաւորներ, որք մի որ և է պանծալի գործ չեն կատարում: Նոյնը պատմում են, որ Հայաստանում Արամից լետոյ մինչ Պարուր, Մարդանապալի ժամանակակիցը, եղել են 30 թագաւորներ և նոյնպէս՝ որ և է մեծագործութիւն ինչ չեն արել: Սակալն Նինուասից լետոյ քսաներորդ Ասորեստանի թագաւորը, Տետամոսը ի նորաստ Պրիամոսին ուղարկում է Եթուղացւոց զօրքը Մեմնոնի առաջնորդութեամբ, սրին սպանում են թետաղացիները: Այս հանգամանքին լարմարուելով, Խորենացին պատմում է թէ Տետա-

մոսը եթոպացիների զօրքի հետ ուղարկեց նոյնպէս, Արալից
լետոյ քսան և մէկերորդ թագաւորին, Զայմալըին, որին
Տրօնական պատերազմում սպանեցին հելլէնների քաջերը:

Ասորեստանցիների ՅՈՒՐՈՐԴ թագաւորի, Սարդանապա-
լի, Ժամանակ Նինուէն կործանվում է Մարաց Ա.արքակէս/
ձեռից: Եթէ դիմենք Խորենացու պատմութեանը, այնտեղ
կը գտնենք, որ երեսուներորդ հայոց թագաւորի ժամանակ,
Պարոյրի, Նինուէն հարկադրուած է եղել անձնատուր լինել
Վարքակէսին, որը, Պարոյրի ցոյց տուած ծառայութեան փո-
խարէն, թոյլ է տուել նրան ընդունել թագաւորութեան
տիտղոսը:

Այդ բաւական չէ, եթէ համեմատենք Ասորեստանցինե-
րի թագաւորաց անունների ցուցակը Խորենացու հայոց թա-
գաւորաց անունների ցուցակի հետ, կը տեսնենք, որ վեր-
ջինները շատ անգամ ստեղծուած են ի նմանակցութիւն ա-
ռաջիններին: Օրինակ՝ Խորենացին Անուշաւանին տալիս է
Սոս անունը, այսինքն սոսի, բայց նոյն իսկ ժամանակ ա-
նուանում է Ասորեստանի թագաւոր Սոսարիսին:

Իէլոքոսի ժամանակակիցն է Հայկակ: Եթէ այս անուն-
ների վերջաւորութիւնները գէն ձգենք, կը ստանանք մեզ
լայտնի անուններ Բէլ և սրա ժամանակակից Հայկը:

Միարէսո ժամանակակից է Նրանտի կամ Նրատի: Այս
երկու անունները նշանակում են պարսկերէն և Հայերէն—
Հուր, կրակ:

Սովորմասը համաձայնացրած է Շաւարշի հետ և այլն:

IV.

Ասորեստանեայց բաշաւորների Հայաստանին վերաբերեալ
արձանագրութիւնները

Ինչպէս և տեսանք վերը, Հայոց պատմութեան այն
մասը, որտեղ խօսում է Խորենացին Հայկից սկսած մինչև

իգրանը, կարող է ունենալ մեզ համար միայն այն նշանակութիւնը, ինչ որ ունեն անցած գնացած որ և է տւանդութիւնների փշրանքները, իրանց միզամած և շատ անգամ անհասկանալի տեղերով հանդերձ: Խորենացու մեծադին գործի՝ հալոց պատմութեան՝ այս ակնարկած մասը այլ նշանակութիւն կունենար, եթէ նա պարտ ու պատշաճ ուշագրութիւն դարձնէր հողորդած աւանդութիւնների ժողովրդալին տարրերի վրա, այսինքն՝ եթէ առաջ տանէր նա իր գործը այն ճանապարհով, որի վրա այնքան տնօտեմ դարձնում է նրա ուշագրութիւնը Աահակ Բագրատունին: Բայց Խորենացին այլ կրթութեան տէր մարդ էր, ըստ որում նա աւելի մեծ նշանակութիւն էր տալի մի ինչ յետին, աննշան լոյն կամ ասորի հեղինակին, քան ժողովրդալին մտաւոր վաստակին: «Զինչ քեզ առ ալսոքիկ կարօտութիւն առասպելք սուտք, կամ զինչ պէտք անմիտ և անհանձար բանից լարմարանք», ահա ալսպէս էր կշտամբում իր մեկենասին, և եթէ վերջ ի վերջոյ տեղ էլ գտնուած էին այս անմիտ և անհանձար բանքը նրա պատմութիւնում՝ ոչ թէ նրա համար էր, որ պիտոյ էին ըուն գործին, «այլ տացուք մանկականի քոյոց տիոց և անհասութեան խակութեանդ լեալ տարփանք: Վասնորոյ եղիցի և աստանոր լնուլ մեզ զփափագ կամաց քոց»: Ի հարկե ցաւելու և տրտնջնելու ժամանակ չէ հիմալ, որովհետեւ ոչ մի տրտունչ բանը չէ կարող փոխել և ինչ էլ կորցրել ենք չենք գտնի: Մնում է դիմել այլ ճանապարհների, այլ աղբիւնների, որք կարող են լիացնել պատմութեան ալս լուսանցքը: Այս աղբիւններից ամենանշանաւորը սեպաձեւ արձանագրութիւններն են: Մեր ընթերցողները ծանօթ են փոքր ինչ այն հետևանքների հետ, որք ստացվել են Վանալ արձանագրերի վերծանութիւններից: Այժմ խօսենք ալդ տեսակ այն կողմնակի աղբիւնների վրա, որք նոր լոյս կարող են ձգել և կարող են նեցուկ լինել մեզ

գրագեցնող խնդրի լուծմանը։ Այդ ազբիւրներն են՝ Ասորեստանեալց թագաւորների այն արձանագրերը, որք վերաբերում են Հայաստանին։ Այս արձանագրերի բովանդակութիւններն են նիւժ դառել պլոֆէսօր Պատկանեանի երկասիրութեան չորրորդ, վերջին, գլխի համար։ Որպէս ամեն մի նորածին գիտութիւն ունի իր թուլ և անկատար կողմերը, նոյնպէս և ասորեստանարանութիւնը գեռ մինչեւ ալժմ, չը նալելով նրա երեսուն տարուալ ծագմանը, չէ ասել իր վերջին լիակատար խօսքը, շատ բան ալստեղ թէութեամբ է հարկաւոր ընդունել։ Եւ եթէ աւելցնենք, որ ալդ արձանագրերի գուցէ մեծ մասը ՚ի կորուստ է մատնուած հողի մէջ և դեռ լոյս չէ եկած, հասկանալի է ուրեմն թէ ինչ լոյսեր պիտի գնենք այս ընթացքում ապագալի վրա։ Բայց ալդ խնդրի արդի գըրութիւնը անգամ արժանի է մեր ամենալի ուշագրութեանը, արժանի է ալն, — եթէ կամենաք՝ նեղ և սահմանափակ, — տեսակէտից նաև, որ գիտութեան ալդ նոր ճիւզը վերաբեր վում է և մեր՝ հայերիս՝ անցածին, նոր գոյն է տալի նա ալդ անցածին, նոր աշխարհ է բաց անում մեր մտքի առաջ... Եւ որպէսէտե, կարծեմ չեմ սիսալվում, — այս առարկան առաջին մնագամն է որ տեղ է գտնում մեր գրականութիւնում, ես կաշխատեմ ալստեղ որքան կարելի է ընդարձակօրէն ծաղկաքաղել ալ. Պատկանեանի գործի չորրորդ գլուխը։

Գանք ուրեմն իսկական առարկալին։

Կարդալով Ասորեստանեալց թագաւորների արձանագրերը, ասում է Պատկանեան, — մենք ստէպ պատահում ենք նրանց ունեցած արշաւանքների հետ հիւսիսում, ալսինքն այն երկրներում, որք պատմական ժամանակներում լայտնի եղան մէկ ընդհանուր՝ Հայաստան՝ անունով։ Այս արձանագրերի բովանդակութիւնները ոչ ալլ ինչ են, բայց եթէ ասորեստանեալց թագաւորների մի տեսակ լազմական վկալարանութիւններ, որով զեկուցանում են նրանք ժամանակա-

ից և ապագայ սերունդներին իրանց լաղթանակները չոր ու շամաք գիւանական ոճով գնացի, լաղթեցի, խորտակեցի, աւար առի և ալին Պատերազմերի պատճառն այն է եղել, որ գրացին մոռացել է Ասուրի ահը, գադարել է Հարկ վճարելը կամ ապստամբել է... Այս տեսակ աղբւարներից ի հարկէ զժուար է մի երկրի փոքր ի շատէ կարգաւորեալ պատմութիւնը գրել։ Սակայն Ասորեստանի արձանագրերի մեզ հաղորդած լուրերը թանկագին են մեզ համար այն տեսակէտից, որ նրանց նըշմարած ժամանակները կենդանացնում են առաջաւոր Ասիայի պատմութեան այն ժամանակաշրջանը, որի վերաբերմամբ չունենք մի որ և է գրական տեղեկութիւններ և հարկադրուած ենք եղել մինչև այժմ բաւականանալ առասպելաբանութիւններով։ Այս արձոնագրերի գլխաւոր լատիկութիւնը այնքան նրանց ճշտութիւնը չէ, որքան ստորագրուած ժամանակաշրջանի մօտաւորութիւնը և ժամանակակցութիւնը։ Յայտնի է, որ ասորեստանցիք միշտ բանը այնպէս չեն պատմում, որպէս տեղի է ունեցել նա. նրանց ճշտական լաղթանակները ամեն անգամ լաղթութիւններ չեն եղել—այդ ճշմարիտ է, բայց յօրինել կեղծ պատերազմեր, անձնաւորութեանց և վայրերի անուններ նրանք չէին կարող։ Բացի գրանից, նրանց առած աւարների, որոնց վերաբերմամբ նըրանք ամեն անգամ ընդարձակօրէն հաղորդում են, —այս աւարների, ասում ենք, —քանակութիւնը ու լատիկութիւնները ցոլց են տալի այն երկրների ծիսակերտական (ԿԱԼՏԵՐ-ԱԿԱ) գրութեան աստիճանը, որտեղից բերած են այս աւարները։

Ըսդ սմին լակամալից հարց է ծագում. Ասորեստանեալց արձանագրերի ընթերցանութիւնը հասցրած է արդեօք այն աստիճանին, որ պատմաբանը կարողանար հաւատ ընծալել այն մեկնութեանցը, որք ստացվում են այդ տեսակ աղբւարներից։ Ասորեստանեալց արձանագրերի ընթերցանութիւնը

բացատրում է պատկառելի հեղինակը, — հիմնուած է գլխաւորապէս աքամենիզների արձանագրութեանց պարունակութիւնների գուգընթաց թարգմանութիւնների վրա: Սրանք են տուել ասօրեստանեալի զրաւթիւնների վերծանութեան առաջին և հաստատուն հնարքը, բանալին, — և այս միջոցով ստացած տեղեկութիւնները իսկ՝ կատածանաց պատրուակ չը պիտի լինեն: Աւելցնենք, որ սեմական լեզուների բաղդատական ուսումնասիրութիւնը և նոյն իսկ ասորեստանցիներից մնացած մի քանի միջոցները բաւական առհաւատչեալ, նիւթեն ճշտապէս ուսումնասիրելու ասորեստանցիների լեզուի բառարտնը և քերականութիւնը... Ասորեստանաբանութեան երկրայելի կողմը միայն լատուկ անունների կարգալն է և ոչ ամբողջ արձանագրերի բովանդակութիւնները ըմբռնելը, որք, ընդհանրապէս խօսելով, ուղիղ են կարգացվում: Յատուկ անուններին պիտի նախած ոչ թէ որպէս իսկական անունների, այլ իբրև ալճերական նշանների վրա, օրինակ X, Y, Z, որոնց խնդրեալ նշանակութիւնները ժամանակակը գտնուեն: Այս պատճառով իսկ, աւելցնում է հեղինակը, — մեր այս լոգուածի մեջ պատահած անունների նկատմամբ մենք չենք պնդում թէ այս կամ այն անձնաւորութիւնը անպատճառ ունեցել է այն անունը, որը մենք ենք տալի նրան: Որինակ՝ Ա. անալի մէկ թագաւորի անունը առաջ կարգացվաւմ էր Անրիգուրիս, լետոյ, Բէլիագուրիս, Հուօկ յետոյ, Բագրիգուրիս, իսկ ալժմ՝ հաւանական է որ՝ պիտի կարգացվի Սեղուրի կամ Սարգսուրի, որովհետև այս անունը պատահում է և Ասորեստանեալց արձանագրերում *):

*) Եյս խնդրի նկատմամբ դարձնում ենք ուսումնասէր ընթերցողի ուշադրութիւնը նոյն հեղինակի մի ուրիշ երկասիրութեան վրա ևս “Օ մոնմոմ” походъ Таслэдъ Паласара къ берегамъ Инда., 1879 г. С. II. Б. Еյս դրբին հեղինակը յարակցել է Ասորեստանի, Մարաց և Ասորեստան երկրների, Միջազետքի և Հարաւա-

Վաղ քան գՔրիստոս XI դարից սկսած՝ ասորեստանցիները, խաղալով դէպի հիւսիս՝ Տիգրիսի գետաբերանը, պատմում են Հարիւրաւոր մանր իշխանութիւնների և ազգերի ետ, որք սկզբում բուռն ընդդիմութիւն են ցոլց տալիքանց և վերջ ի վերջով լազմիվում։ Խսկ IX դարում, երբ բանք անցնում են Արգանիաս գետը (Մուրագ-չալ) պատմում են մի բաւական ուժեղ ազգի ընդհարմանը։ Սրանց ըրարտու անուն են տալիք ասորեստանցիները։ Այս Ուրարտու կամ Ուրարտուոց ժամաւարները կարի լոլիք ընդդիմութիւն են ցոլց տալիք նրանց, և գրանով լալտնվում է, որ ուս թագաւորները միայնակ չեն գործում, այլ գաշնակցութեամբ ուրիշ ազգերի և ցեղերի հետ, որոնք, ասորեստանիներից ստացած զաժան Հարուածներից լետոյ անզամ, մըում են ուրարտուցիներին հաւատարիմ և ասորեստանցիների ամբողջ տիրապետութեանց ժամանակաշրջանում չեն ուրս զալի առաջինների քաղաքականութեան չափ ու սահմանից։ Ահա ալդ իշխանութիւնների և տերութեանց հաւատու տեսութիւնը։

Առաջին հայոց աշխարհը, որ գտնվաւմ էր անմիջապէս ասորեստանի հիւսիսում, ալդ՝ լայնածաւալ նախիր երկիրն ը։ Նախիր ընդարձակ մտքով ըռնում էր այն լեռնադաշտը, ուր տարածվում է Տիգրիսի գետակը և Մուրագ-չալի գետասպնում ափերից սկսած գէպի արևելք մինչև Զահրսասեառն։ Նրա Հարաւային սահմանը, որքան որ կարելի է հասկանալ արձանագրերից, հասնում էր մինչև հիւսիսալիին այնութեան 37°, ուրեմն պարունակում էր իր մէջ հայոց ժագաւորութեան չօրս աշխարհը՝ Ծոփաց աշխարհ, Աղձնիք,

ին Հայաստանի քարտէզը, ըստ Ասորեստաննայց աղբիւնների։ Այս քարտէզով առաւել դիւրութեամբ կարելի է հետամուտ լինել ասորեստանցիների ոյն յառաջընթացութեանցը գէպի Տիգրիս, որոնց վերաբերութեամբ խօսում ենք։

Մոկք և Կորճալք: Խոկ նեղ և աւելի գործածական մտքով
նախրի բռնում էր վերուիշեալ բարձրաւանդակի արևմտեան
մասը, վերջանալով արևելքում Վանա լճով և արդի Քուր-
դասանի լեռներով: Նախրի բաժանվում էր բազում մասը
գաւառների վրա: Սրանցից լիշենք հետեւեալները. Յասոփարի
Կիրխի, Ենզիտի ալսինքն՝ Անձիտ, Զամանի, Նումիմի, Կիր-
քուրի, Արիդի, Սիմիսի և այլն Առանձին իշխանութիւնների
թիւր հարիւրի էր հասնում: Ի միջի այլ քաղաքաց աւել
նշանաւորքն էին՝ Ամիդա, Տուշկա, Անբար, Արզանիալ (Արզն):

Նախրի արևելեան մասը և այն լեռների հարաւային
կողմը, որք բաժանում են Վանոյ լճի Հըշեղջը Որմիալից
պարունակում էր իր մէջ երկու իշխանութիւններ՝ Արագիտ
(Ալբակ) ալսինքն՝ Հաղրակ, Աւագ Զարի գետաբերանի վրա
և Խուզուշկայ՝ փոքր ինչ գէպի արեւելք՝ Զաղրօսի սկզբում:
Խուզուշկից և Որմիալի լճից գէպի հիւսիս դանվում է:
Կիրզան կտօ Գուզան իշխանութիւնը, որը երբեմն կարդաց
վում է Գիլզան ևո: Խոկ Արագիտից գէպի հիւսիս, Վանայ
լճի արևելեան եզրում դանվում էր գօրեղ Վաննա իշխանու-
թիւնը իր Տուրուսալա և Զիրտու քաղաքներով: Այս բոլոր
երկրները պատկանում էին լայնատարած Նախրի աշխարհին,
որի հետ ասորեստանցիները՝ գեռ ևո լX գարից առաջ՝ մօտ
ի մօտոյ ծանօթ էին: Խոկ լX գարուց յետոյ ասորեստանցիները
սկսում են անցնել Արզանիաս գետը (Մուրադ-չալ) գէպի
հիւսիսային Հայաստանը, որտեղ դանվում են հետեւեալ թա-
գաւորութիւնները և իշխանութիւնները:

Վանայ լճի հիւսիսային եզրը բռնած ունէր Մուսա-
սիր իշխանութիւնը, իր Զատղարի անուն քաղաքով: Արզա-
նիասից իսկուն գէպի հիւսիս ասորեստանցիները պատահում
են երկու իշխանութիւնների Սուխմէ և Դաեանի: Մեծ
Արարատի մօտ Միլդիշ իշխանութիւնն էր: Այս ամեն իշ-
խանութիւնները ստորագրուած էին հզօր Ռւրարտու աշխարհի

Թագաւորին: Աեղագէտները վաղուց է որ Ուրարտուն
նմանեցնում են Արարտի և Հերոդոտոսի Ալարոդների հետ:
Կարելի է ենթադրել որ Դափիրի աշխարհի իշխանութիւնները
և Խ դարուց լեռ Ուրարտու թագաւորների իշխանութեան
տակ էին, որոնց մայրաքաղաքը Արգասակուն էր: Արձա-
ւագրեամբ չէ լիշվում որ ասորեստանցիները Ուրարտում
արշաւելուց անցնեին Արտքս դետր Ուրարտու թագաւորնե-
րին դաշնակցում էին սույպ Մելիդդու իշխանութիւնը իր
համանուն քաղաքով (միքարում Մելիթինէ) Եփրատի աջակող-
մեան ափում, Միլիդդուից դեպի Հարա Տուրոս լեռներում
ալեատարած Կումուխ գաւառը, որը նմանեցնում են Հումա-
ւեցիների *Commagene*-ի հետ: Այս երկիրները, որք գտնվում են
Եփրատի, և Տիգրիսի գետակնեալ ափերի մէջ աւելի հնա-
դայն ժամանակներում թաւակցում էին նոյնպէս Կումուխին:

Ասորեստանցիները *) իրանց արշաւանքը անպատում
գուշութեամբ էին կատարում, և սրովհետեւ նոր նուա-
նեալ երկիրները իրանց իշխանութեան տակ սահելու շնորհը
շունեին, տրտ պատճառով նոքա մէր քանի տարի անընդհատ
արշաւում էին այն երկիրների մրտ: Այս Հրոսմանց նպատա-
կը լափշտակութիւն էր և դրացի երկրների քանդ ու աւերու-

*) Սրանից փոքր ի շատէ պիտարակ պատմական արձանադրու-
թիւնները այժմս արգեն հրատարակված են զանազան ժողովածու-
թատեաններում: Մատնացցյա անենք սրանցից զիմաւորները. Լէյարդ
—Inscription in the Cuneiform character, from Assyrian monu-
ments, London 1851. Իրիտանեան թանգարանը լառուինաօնի,
Կորրիսի, Սմիսի և այլ աւորեատանագէտների օգնութեամբ Լոյս
ածայից կ մեծ հատորներ The Cuneiform Inscriptions of Western
Asia (J. W. A.) Մենան—Annales des Rois d'Assyrie. Paris, 1874
աղիերէն, Records of the Past շարձեալ Իրիտանական թանգարա-
կի հրատարակութիւն, և մինչև այժմ տասնեւ մէկ հատորիներ են
ցոյ ածած, որոնցից միամիւ հատորները ասորեստանիներից է
Արգմանլած, իսկ զոյ գալթիւերը՝ նոյնականից:

մըն: Ալս աեսակ երկրներից մէկն էր Նախարհ աշխարհը, քանի հարիւրաւոր տարիներ գէպի նախրի էր ուղղած ասորեստանցիների լարձակումները: Յամբաշարժ, բայց հաստատաբար, ծաւալելով իրանց սահմանները, նոքա ժամանակով կարողութիւն էին ստանում հեռակալ արշաւանքներ անելու, չը մեկնուելով սակայն շատ հեռի իրանց բնիկ իսկական սահմաններից: Երկար ժամանակ նրանք չէին լանդգնում մտնել Հայաստանի լեռնալին խորածորերը և, չը նաև լոկ իրանց ահեղ զօրքին, խուսափում էին զօրաւոր գրացիների Ուրարտու և Ելամի՝ ամենուակերպ ընդհարումներից: Յարձակուական գերը ասորեստանցիք միշտ իրանց էին վերագրում և միայն մէկ անգամ՝ Ասարգատօնի ժամանակում՝ արձանագրերը խօսում են միդաց ազգի գիտաւորութեան վրա—միսի Ասորեստանի մէջ, սակայն ալս անգամ էլ ասորեստանցի կանխաւ մեդացիների գիտաւորութեան առաջն առնում են...

Արձանագրերից երեսում է, որ ասորեստանցիների առաջին բաղխումն Հայաստանի բնակիչների հետ եղել է XII դարում, երբ Տակլատ Բալտասար I, այդ նախակին աշխարհակալը դուրս է գալի Մուսկայների (Մասկերի) գէմ, որը 20,000 զօրքով և հինգ թագաւորների տառաջնորդութեամբ սպրդվում են Կումուխի մէջ: Մուսկայները ջարդվում են Կասիար գաւառում, քաղաքները կողապտվում, 600 մարդ գերի և զնում: Ալսակ մտաբերվում է այս արշաւանքը ալն պատճառով, որ Կումուխը ալն ժամանակ բռնում էր Հալոց երկրի մի մասը՝ Եփրատի ձախակողմեան ափում....

Յետագալ տարում Տակլատ կրկին ձեռն է մխում արշաւանքի նախրի մերձակալ գաւառները: Թաղաւորը շարժվում է Տիգրիսի ձախակողմեան եզրով գէպի նրա գետաբերանը, գէպի Կիրխի գաւառը, մտնում է Իտնի, Ալեւաշխարհները և մօտենում լեռներին, ոքք թըրի ըերանպէս սուր էին և անցք չէին տալի իմ կառքերին:

Յետոյ թագաւորը անցնում է հարաւալին Նալաստանի բաւականին խորքերը, կրակի և սուսերաց բերան առնելով այն ամենը, ինչ որ պատահում է իր ճանապարհին: «Ես պատժեցի Սարանիտ և Ամանիտ գաւառները, որք երբէք գեռ հպատակած և խոնարհած չեն եղել.... Նրանց ոլժերի հետ պատերազմեցի Արումա գաւառում ու ջարդեցի նրանց: Նրանց հրոսակների խումբերը, որպէս խոտ հնձեցի: Ես գերի տարայ նրանց աստուածներին: Ես լափշտակեցի նրանց կալք ու գանձը, ես ալրեցի, քարուքանդ աւերակներ դարձրեցի նըրանց քաղաքները, ես դրի նրանց վրա իմ իշխանութեան ծանր լուծը և հարկադրեցի պաշտել Ասուրին: Նրա միւս արշաւանքը նոյնպէս նախրի երկրումն էր, Տիգրիսի ձախակողմեան ափով գէտի սրա գետարերանը և այն վայրերում, որտեղ առաջին թագաւորներից ոչ ոք չէ եղած: Նա ջարդում է սկզբում 23, լետոյ 60 նախրի թագաւորներ և այն ցեղերը, որք եկել էին վերին ծովի ափերի կողմից նրանց օգնելու...»

Այս արձանագրերի լատկանշան արգասիքներից մէկն էլ այն հանգամանքը պիտի համարել, որ կարի փոքրիկ երկրում ասորեստանցիները թագաւորութիւնները տաօնեակներով են հաշւում, իշխանութիւնները — հարիւրներով, և այս ամենը այն տեղերում, որտեղ մեր ժամանակում հազիւ թէ տասնաւոր գիւղեր կարելի լինի պատահել: Բայց և ալսպէս, ճշմարտութիւնը պահանջում է նշմարել թէ այն երկիրները, որք ասորեստանցիների առաջին արշաւանքների տեղերն էին, աւելի խիտ և հոծ էին բնակեցրած, քան այժմս: Մէկ նկատողութիւն ևս Ասորեստանի թագաւորները սովորութիւն ունէին նա: աճեալ երկիրներում և քաղաքներում կանգնացնել տալ մարմարիօնից կոփեալ իրանց արձանները, զծազրել տալ ուղղաձիգ ժայռերի վրա կտմ անմտտուց լեռնալին անձաւներում: Այս արձանների նկատմամբ թագաւորները ստէպ

լուսում են, բականէ լանուանէ կոչելով այն վալրերը, որտեղ թողել են իրանց լիշտակը:

Մի քանի ալս տեսակ վալրերը, որք մատնացոյց արած են այս երկասիրութիւնում, ևս բաց չեմ թողնում այն դիտաւորութեամբ, որ եթէ մեր բանասէր հայերից մի ոք գտնելու լինի ալդ տեղերում՝ ուշադրութիւն գարձնի ալս կէտերի վրա։ Իրաւ, ժամանակ է և մեզ՝ Հայերիս՝ պարապել մեր պատմական հայրենիքին վերաբերեալ խնդիրներով, և եթէ ամբողջ գործը մենք մեր վրա վերցնել չենք կարող, գոնեա, աշխատել օգնել այն եւրօպացիներին, որք ուսումնասիրում են հին Հայաստանը. ծանօթանանք նրանց գործերի հետ, իմանանք ինչ է պակաս ալդ մեծագին գործերի մէջ, նրանց որ լուսանցքը կարող ենք լցուցանել. . . Բայ մեծի մասին նախկին Հայաստանում ճանապարհորդող եւրօպացիները իրանց լարաբերութիւններում ընակիչների հետ զուրկ են եղել կենդանի խօսքից և այս հարցում բանիմաց հայը կարող էր մեծ ծառալութիւն ցոյց տալ, եթէ խելացի հարց ու փորձ անէր տեղացի ծերերին ու պառաւներին. . . Հայի վզին է այս պարագը և, եթէ չը լիշենք ներսէս Ասրբսեանին, նա գեռ ոչինչ չէ կատարել այս ընթացքում, նա չէ պատրաստել անդամ այն հովը, որտեղ կարողանալին բանել հայ ձեռնահայս ճանապարհորդներ. . . Մեր հասարակութեան որ ֆակտորի վրա կարող է լենուի և ալդ տեսակ գործիչը. գրականութեան ապահովուած վիճակի, թէ հասարակական ընկերութիւնների հասունութեան վրա, . . . Ոչ մէկի. ամեն բան թողած է «կոյր բաղդին» . . .

Ասուր-Նասիր-Բալ (882—858) իր ներկալութեան ժամանակ նախրում կառուցանում է Տուշկա քաղաքում մարմարիօնից իր պատկերը, նկարագրելով իր կատարած մեծագործութիւնները նախրում. նոլնը թողնում է իր պատկերը, գարձեալ արձանագրութիւնով, Մատիստի քաղաքում ևս.

Սալմանասար 856 թւին կանգնեցնում է իր պատկերը և ալ-
լար երկրում Վանի մօտ, 850-ին—Տիգրիսի գետակնի վրա,
842-ին—Եփրատի գետակնի վրա և այլ տեղեր, 835 թւին
—Խարխար-աշխարհում։ Սամսի-Բին 819-ին—Դիբատ-Բունդա
գաւառի՝ Սիրար քաղաքում։ Տակլա-Պալասար—Ռուրարու
աշխարհի Տուրուսպու քաղաքում։ Սարգօն—քաղաքներում՝
Կիսասի, Եզիրատու և այլն։ Եթէ մենք կարողանալինք գլու
նել այդ արձանների մէկ մասը անգամ, ասում է Պատկան-
եան, —մենք կունենալինք այնպիսի որսշեալ կէտեր, որտեղից
կարելի կը լիներ ջրջահալի խառնիխուռն անհասկանալի
անունների մէջ։ Առ ալժմ այս արձաններից մէկն է գեռ
գանուել։ Ասուր-Նասիլ-Բալ, որին Հէնց նոր լիշեցինք, գրում
է իր արձանագրում հետեւեալը. «Ասուրի, Սամասի, Բինի-աս-
տուածների—իմ պաշտպանների վճիռով Սուպնատա գե-
տի ակնում ես Հաշւեցի իմ կառքերը և զօրագնդերը։ Դա
այն տեղն էր, որտեղ իմ Հայրերը՝ Տակլա-Պալասար (I) և
Տակլագ Սամդան (888), Ասորեստանեալց թագաւորները
կանգնացրել են իրանց պատկերը, և ես Հրամալեցի գծագրել
իմ առնապատկերը նրանց կարգում։» Անդզիալի հիւպատուը
Դիարբեքիրում, Տէլլօր, որը ճանապարհորդում էր Քուրդաս-
տանում 1861—63 թուականներում, Տիգրիսի աղքերակնե-
րից մէկի ափերում, Դիբենէ—սուիշի Զիբենէ—սու, Կարկար
գիւղի մօտ մէկ զառ ի թափ ժայռի վրա գտնում է Ասորես-
տանի թագաւորի պատկերը՝ հանդերձ ոչ մեծ գրութիւնով։
Այս պատկերից փոքր ինչ հեռի գտնում է նա դարձեալ մի
դրօշեալ կո։ Յալտակում թէ՝ այս պատկերները և արձա-
նագրութիւնները նոյնն են, որոնց վրա խօսում է Ասուր-
Նասիլ-Բալ։ Ահա այս գիւղի հետեւանքը. Սուպնատ
գետը—ալժմեան Զիբենէ—սուն է, թէ այն գաւառը,
որտեղ գանվում է այս գետը, Ասորեստանցիները նախ-
ըի են անուանում, և թէ Նախըին նուածել է Տակ-

լադ Պալասարը... Բայց անցնենք կրկին բուն խնդրին:

Տակլադ-Պալասար Լից լետոյ, ամբողջ 200—250 տարիների ընթացքում, մենք չենք գտնում կատարեալ տեղեկութիւններ նրա լաջորդների մեծագործութեանց վրա: IX դարուց սկսում են կրկին արձանագրութեանց երկար շարքերը, որոնք բովանդակում են աշխարհակաների ընդարձակ ճանապարհացուցակները: Այսպէս Ասուր-Նասիր-Բալից մնացել են արձանագրեր: Սրանցից ամենահնագոյնը գտել են Նիմրուգի արքունեաց աւերակներում մի մեծատարած միապաղպիմի վրա, որը պալատի սենեակներից մէկի լատակն էր կազմում: Այս արձանագիրը ի միջի ալլօց հաղորդում է թէ՝ Ասուր-Նասիր-Բալից առաջ հարաւային Հայաստանում արշաւել են նոյնպէս նրա նախորդները՝ Սալմա-ասար I (1010) և Տակլադ-Սանդան (888), որի պատկերը Ոււալնատի վրա են գտել: Այս արշաւանքների մանրամասնութիւնները չեն հստակ մեզ: Տեսութեան առնենք այս արձանագրի բովանդակութիւնը: Ասուր-Նասիր-Բալ առաջին անգամ արշաւում է Նախրի այն խորքերը, ուր նրանից առաջ զօրք չէ եղել մտած՝ Խումմի, Կիրարի, Սիմիսի և այլ իշխանութիւններում: Նրա Կիրարում գտնվելու ժամանակ, Կիրզանա և Խուրուշկա իշխանութիւնների բնակիչները ընծալ են բերում նրա համար ձիեր, սոկի, արծաթ, երկաթի շերտեր և գործիքներ (?): Կիրարուց թագաւորը գիմում է գեպի արևմուտ՝ Կիրկի գաւառը ու գրաւում է Խուլօւն, Խասու, Խալարու, Խիստուն, Իրբիգի, Արգանիէ և այլ քաղաքները, որք գտնը վում էին Աւգու, Արուէ, Արարդի գօրաւոր աշխարհների սահմաններում: Յետագալ (882) տարում Արու (Խուլիս) ամսի 24-ին թագաւորը կրկին խաղում է գեպի Նաիր, տիրում է Նիպուր և Պաղատէ (Ծիգրիսի ձախակողմեան գետակնափի վրա) իշխանութիւնները: Արանցից լետոյ, անցնելով Տիգրիսը, Քարուքանդ է անում Կումուխի երկիրը և պահանջում է

նրա բնակիչներից և Մուսկերից (Մուսխերից) հարկ, որը կալանում է խաշանց հօտերից և արջառոց անդիաներից:

Արեմտեան կողմում սկսած խռովութիւնները հարկադրում են թագաւորին աճապարել դէպի Ասորիք...

Թագաւորը հազիւ վերադարձել էր մարտաքաղաք, որ խսկոյն յարտնում են նրան, Տիգրիսի գետակնափերի վրա գտնված իշխանութիւնների կրկին ապստամբութիւնը: Նա նոյն ժամուն ճանապարհ է ընկնում: Ասորեստանեալց թագաւորների համար նահիրի հետ պատերազմելու ռազմա-ժողովատեղին (օպերացիոնալ բազисը) գտնվում էր նահիրի կենտրոնում՝ Սուլպնատառ գետի ափերի վրա, որի վերաբերմամբ վերը խօսել ենք: Ապստամբեալ քաղաքները մերձակալքումն էին ուրեմն գտնվում, և Ասուր-Նասիր-Բալ հեշտեաւ և արագութեամբ ճնշում է ապստամբութիւնը. մէկ մէկու լեռեւից առնում է՝ Մարիրու, Նիրբու (Ուխիրա լեռան մօտ), Կինարու և Տիլա քաղաքները, որի ու կրակի ճարակ տալիս՝ «Աս յափշտակեցի նրանց կալքը, ոչխարների հօտերը, եզանց անդեանները, շատ աւարներ ալրեցի: Նատ գերի առի. մէկերի ոտ ու ձեռը կտրեցի, միւսների՝ քիթը ու ակաջները, ոմանց՝ աչքերը հանեցի: Ես երկու դէզ շինեցի. մէկը կենդանի գերիներից, միւսը սպանուածների կառափներից և կուտակեցի նրանց մինչև քաղաքի պարսպի բարձրութիւնը: Ես բգնաբարեցի նրանց ուստերքը և գտտերքը, ես քանդեցի նրանց քաղաքները և կրակով ալրեցի: Ապստամբութիւնը տգայնորդողին, Խուլային, մորթեզերծ է անում և բենեռում Դամդամուշ քաղաքի տղարսովին: Նոյն խոկ ժամանակ վերանորոգել էին՝ Ասորեստանին հաւատարիմ Տուշկա կամ Տուշկան քաղաքի ամրութիւնները, որտեղ իրան համար դարպաս է կառուցանում թագաւորը: Կիրկի գաւառը նոյնպէս աւերում են: Երկու հետեւեալ տարիներին ընթացքում թագաւորը զբաղած է եղել Ասորիքում և Զամուայում, Ասորեստանից դէպի հարաւ:

Ալպելու մենք տեսնում ենք, որ Հենց Ասորեստանցիները հեռանում են Նախի գաւառներից, ծագում է իսկոյն նոր ապատամբութիւն զոնազան տեղերաւմ. Աներկրայելի է ուրեմն, որ Հարթավին հին Հայաստանի ընակիչները քաջասիրա էին և բարձր էին դնում իրանց անկախութիւնը... Հաւատարիմ մնալով իրանց մարտակրթական օգուն, իսկ և իսկ առաջին անաջողութիւնից յետ խոյս էին տալի զանագան կողմեր և ժմագնվում անմատչելի քարանձաւներում: Ասորեստանեալց ո ազմական գերաբուն կազմութիւնը, նրանց անողութ և ամարգի աւերումները, որ կատարվում էին ալս երկրներում, պիտի որ Հնազանգեցնէին նրանց ընակիչներին և խոնարհեցնէին խալառ... բայց իրողութիւնը այսպէս ցըր սակայն... Այս ժամանակ, երբ Ասորեստանիր-Բալը զբացուած էր Զամուալ իշխանութիւնը նուաճելով, Նախրում՝ երկու տարի որանից առաջ Հնազանգեցուցեալ գաւառներում՝ կրկին ծաւալվում է ասպատամբութիւնը: Թագաւորը կրկին աճապարում է դէպի արդ երկրները կրկիճ՝ սուր, հուր, քանդ ու աւերում... 879 թէին անցնում է նա Տիգրիսը և ընթանում դէպի Կաւմուխ, որտեղից պղինձ, անասունների հօտեր է տուրք առնաւմ: Այսուղից երեսը դարձնում է դէպի արևելք. քանդում է Մատիքատ քաղաքը (կարելի է որ՝ Մադիքատ Միջագետքում) ու միջամուխ լինում Կասիարի գաւառը: Այսուղի առնում է քանի մի քաղաքներ, լափշտակում է անասունների հօտեր մետաղներ, առաղձներ, որք հարկազօր էին նրա կերտուածոց համար... Այսուհետեւ զկնի բամառ ընդգիմադրութիւնից Պետութա քաղաքը անձնատուր է լինում նրան, և մենք կրկին կարգում ենք. «Ես առի քաղաքը, ևս սպանեցի 800 մարդ, ևս կտուինեցի նրանց...» և այլն: Ահա թէ Կիրկի գաւառը ինչպէս է աւերակ գառնում. «Ես 2000 զերի առի, երկու հարիւք գերիների գատակները կարեցի...» ևս նախրում 250 քաղաքներ ու գաւառ-

ներ աւերեցի...» Զամանի գաւառում, որ նորսպէս նախրումըն է, վաճառականութիւնը և արշեստը բաւականաչափ ծաղկած են եղել, ինչպէս որ երեսում է Ասուր-Նասիր-Բալի առաջ աւարներից. նա այստեղից տանում է բացի պղինձու անասուններից, այլ և կառքեր, 460 ձիաներ իրանց կազմացքներով ու սալլերով. արծաթ, ոսկի, 100 երկաթէ տաղանգներ, պղնձէ ու երկաթէ անօթներ, բրդէ ու թելէ (կտաւէ) 1,000 զգեստներ, զանազան տեսակ փայտեր, պալատի համար ոսկուց զանազան սեթեկթներ, 2,000 զոմէշ, 5,000 ոչխար և մեծատունների աղջիկներին հարուստ օժիտներով...».

Նախրում իր վերջին արշաւանքը թագաւորը անում է 866 թւին, երբ նա հասնում է Կասիարու ալն տեղերը, ուր չեն եղել չաստծ իմ նախնիքներից ոչ մի թագաւոր: Յետոյ անցնելով Տիգրիսի աջակողմեան ափը՝ Հիւսիսալին Միջագետքը՝ նա հասնում է մինչ Եփրատի ափերը: Կիրկում եղած խռովութիւնները հարկադրում են նրան նորէն անցնել Տիգրիսի ձախակողմեան ափը: Խպոտեղ կրկին սանձում է բնակիչներին և, շարժուելով գէպի արեմուտ, առնում է Դամդամուշու քաղաքը, որի բնակիչներին գաղթեցնում է Ամիդա, իսկ գերի զօրքերին ի խաչ հանում դլխաւո՞ր գրանց առաջև: Ալարէս Ասուր-Նասիր-Բալի երկրակալութիւնները սահմանափակում են Մուրադ-շահի գծով (Arzanias), Վանալ լճի հիւսիսալին ծովափով և Զագրոս սարով: Սրա յաջորդներին մնում է անցնել Արգանիաս գետը ու արշաւել Ուրարտու աշխարհում: Արգանիասից և Վանալ լճից գէպի հիւսիս ծաւալած երկիրը բաժանուած էր մի քանի խոշոր և բազում մանր իշխանութիւնների վրա, որոնք պատրագուած էին — ու ազմական նկատմամբ — Ուրարտու թագաւորների իշխանութեան ներքոյ: Այս թագաւորների գերիշխանութիւնը ընդունում էր ամբողջ հիւսիսալին Հայաստանը:

Սալմանասար (857—856), Առուբ-Նասիր-Բալի յաջորդը, իր առաջին արշաւանքը անում է Նիննի, Սիմիսի, Արիգի և այլ գաւառներում, այսինքն ի Բոհման (sic) և խաղում է գէպի արևելք Խուբուշկալ գաւառը: Արա պայտատողը, Կոկայ, Հեռանում է գէպի լեռները ու ալտեղ սպասում թշնամուն: Արիւնահեղ ճակատամարտից—ըստ սովորութեան—Ասորեստանցին յաղթող է դուրս գալի: Տուրքեր ժողովելուց և նոր Հարկեր նրանց վրա դնելուց յնտ, թագաւորը մերձենում է Ուրարտոց թագաւորի, Արամի, Զուզունեալ քաղաքին: Այս Արամի (857, 842) ժամանակ առաջին անգամն է որ ասորեստանցիները բախվում են ուրարտոց հետ: Առնելով Զուզունեալ ու սրան ստորագրեալ 14 քաղաքները, Սալմանասար խաղում է գէպի հիւսիս և այնտեղ Վանալ լճի արևելեան ծովեզրում՝ կառուցանում իր պատկերը: Այս մեկնութիւնով մօտաւորապէս որոշվում է Զուզունիոյ գրութիւնը՝ Խուբուշկալ գաւառի և Վանալ լճի մէջ, այսինքն՝ ալժմեան Աղբակի (Աճառք) մի կէտում: Մինչ վերադառնալը մայրաքաղաք նա տուրք է պահանջում Ասուից, Կիրզան երկրի իշխանից և ստանում:

Ցետագայ արշաւանքը նա սկսեց Միջագետքում և վերջացրեց Ուրարտում... Նոր էր Էալմանասար անցել Եփրատը ու Հասել Ասորիքին, ինչպէս լուսում է նա թէ Նաիրում կրկին տպատամբութիւն է ծագել, Անցնում գալիս է մտնում Բիտ Զամանի ու Ենզիտ և արագութեամբ բնաջինջ առնում տպատամբութիւնը: Այլ ևս երկիւղ չը կար նաիրուց: Նա յոդնած էր ու խոնջած այնքան յարձակումներից: Այնուհետեւ Սալմանասարը անցնում է Արզանիաս գետը ու ոտը գնում Ուրարտուաշխարհում, որտեղ այն ժամանակ թագաւորում էր Արամը: Առլիմէ և Դաեանի դաւառները առնելուց յիտ, մինչև Սալմանասարը մերձենում է Արամի մայրաքաղաքին՝ Արզանկունուն՝ Արամը խոյս է տալի գէպի Արամը ինչուները:

ուր և հետեւում է նրան Սալմանասարը։ Այստեղ արիւնահեղ պատերազմի դաշտում ընկնում են 3,400 ուրարտացիներ։ Այս լաղթանակից լետոյ առնում է Արգասկուն քաղաքը և կողոպտում։ Այստեղ, որպէս և այլ տեղերում, կանգնեցնում է իր առնապատկերը հանգերձ արձանագրութիւննով, որ ճառում է նրա մեծագործութիւնները Ուրարտու աշխարհում։ Բաւականանալով մօտագոյն վայրերի աւերումներով, թագաւորը էլ չէ գստահանում Ուրարտոյ խորքերում հալածել Արամին. նա նախընտիր է համարում վերադառնալ։ Այսպէս և անում է, բայց միայն ոչ եկած ճանապարհով, այլ շուրջ է գալի՛ Վանալ լճի միւս ափավ, Կիրզան ու Խուշուշկալ իշխանութիւնների միջից անցնում գնում։ Կիրզանի պարագատ իշխանը, Ասա, ինչպէս և առաջին անգամ, հսկատակութեամբ տալիս է Սալմանասարին ձիեր, գոմէշներ, ալծեր և այլն։ Բայց Խուրուշկայի իշխանը երևի ընդդիմութիւն է ցոյց տալի, որ նրա երկերը կողոպտուել է, բնակիցներից 3000 գերի զնացել և զրկուել բազմաթիւ հօտերից... Այս ամենը տարել քշել են Ասորենատան...

Նոյն իսկ ուղեցուցակով և լաջողութեամբ կատարում է նա իր երրորդ արշաւանքը 854 թւին։ 842 թւին ամայի է կացուցանում Ուրարտու աշխարհի Տունիքուն, Դայեան և Ազիու գաւառոները, Հասնում է Եփրատի գետաբերանը ու այստեղ կանգնեցնում իր պատկերը։ Տասներկու տարուց լետ (830) զառամեալ թագաւորը էլ ինքը չէ առաջնորդում իր զօրքերին, այլ յանձնում իր Թարթան Դայեան-Ասուրին։ Առ անցնում է Նախրի աշխարհից մեզ արգէն յալտնի ճանապարհով և մտնում Ուրարտու։ Արամը արդէն մեռած էր, իսկ այն ժամանակուայ թագաւորին արձանագրերը Սեդուրի անուն են տալի։ 827 թւին նոյն իսկ Թարթանը ուղարկվում է արևելեան Հայաստանը։ Անցնելով Զաք գետը, սա ոտը դնում է Խուրուշկալ, որտեղ արդէն չը կար Կալի իշ-

խանը. այլ տիրում էր Դատակամ Դատանատ Ալյոսեղի խաղում է դէպի Վանալ երկիրը (Մաննա կամ Վաննա) Վանալ պալազատողը, Ուգակի, թողնում է իր մալրաքաղաքը՝ Զիրտու (կամ Իզիրտու) ու փախչում: Խնչպէս երեւն է այս արշաւանքի նպատակը Վանն է եղել, որովհետեւ Թարթանը այս երկիրը աւերելուց յետ վերագառնում է Ասորեստան Խարբու-, Սուրդիրու, Պարսուալ գաւառների միջով:

Միւս անգամ, կրկին նոյն ճանապարհով և նոյն իսկ Թարթանը արշաւում է Ուրարտւայ վրա և աւերում է այստեղ 50 քաղաքներ նոյն ժամանակ գրաւում են Մուսասիր իշխանութեան մալրաքաղաքը, Զապարի, ու կողոպտում: Յայտնի չե թէ այս անգամ ով էր թագաւորում Ուրարտում Սեղուլի, թէ մի ուրիշը... .

Թէպէտ և արձանագրերը գրականապէս են խօսում ասորեստանցիների լաղթանակների վրա Ուրարտու աշխարհում, այնու ամենայնիւ մի քանի կշռադատութիւններ թոյլ են տալի մեր Հեղինակին կառկածել նրանց ճշգութիւնը: — Նախ որ, ասում է նա, — այս լաղթանակակիր արշաւանքների վրա խօսելուց լետով, արձանագրերը լրում են առաջ աւարների նկատմամբ, մինչդեռ նրանք՝ սովորաբար՝ ոչ մի անգամ զանց չեն արել այս կէտր: Երկրորդ՝ ասորեստանցիք Հէնց որ ծանօթանում էին մի երկրի հետ, էլ դադար ու հանգստութիւն չէին տալի այն երկրին իրանց լարձակումներով մինչև որ նուազեցուցեալ և ընկճեալ երկիրը չէին համարում նուաճուած: Այս պատճառաւ սպասելի էր, որ Սալմանասարից լետոյ նրա լաջորդները պիտի ամեն տարի արշաւէին Ուրարտում, բայց սրանց արձանագրերում երկար ժամանակ մենք չենք պատահում այս արշաւանքներին: Այս մի քանի պարագաները իրաւունք են տալի մեզ եզրակացնել թէ՝ Սալմանասարի լաղթանակները այնքան էլ վճռողական չեն եղել, ինչպէս ինքն է խօսում, և թէ՝ Ուրարտացիք բաւականի

ուժդին ընդգիմութիւն են ցոլց տալի ասորեստանցիներին...
Անմսի-ըին Սալմանասարի որդին (882), իր նախորդների շաւզով գարձնում է իր կործանիչ արշաւանքները բաղմաշարչար Նախրի գէմ... Ինչպէս սրա, նոյնպէս իր որդու լաջորդի, Բին-Նիրարի (809—790) արձանագրերում ոչ մի անդամ չէ լիշվում որ նրանք արշաւած լինէին Ուրարտու աշխարհում... Բառականանալով սրանց թագաւորութեան վերաբերմամբ միայն այս երկու խօսքով, բաց ենք թողնում նրանց արձանագրերի մանրամասնութիւնները: Բայց Բին-Նիրարի Նկատմամբ աւելցնենք այն հանգամանքը, որ մի փոքրիկ արձանուգրում՝ որ վերտքերում է նրա թագաւորութեանը, գտնում ենք նրա կնոջ՝ «Սամ ուրամատ Ա.սորեստանի թագուհու» անունը: Գիտնականներից մի քանիսը կարծում են թէ այս թագուհին այն պատմական անձնաւորութիւնը պիտի լինի, որի շուրջը պատում են աւանդութիւնները, ստեղծելով դիւցազնտկան Շամիրամին, որը, ինչպէս յալտնի է, մեծ դեր ունի մեր ժողովրդալին աւանդութիւններում:

Այսպէս Սալմանասար Ա-ի մահուց յետ՝ ամբողջ 49 տարիների ընթացքում ասորեստանցիք հանգիստ են թողնում Ուրարտու աշխարհը և չեն մտնում նրա սահմանները: Երեսի, այս ժամանակաշրջանի վերջումը Ուրարտու թագաւորների զօրութիւնը նուազում է, որովհետեւ Սալմանասար III (786—770) վեց արշաւանք է ունենում այնտեղ: Այդ արշաւանքները յալտնի են ժամանակագրական ցուցակներից: Բայց թէ ինչ թագաւորներ են եղել այն ժամանակ Ուրարտում, մեզ ոչինչ յալտնի չէ, վասն զի Սալմանասար III-ի արձանագրութիւնները չեն հասել մեզ...

Տակլագ-Պալասար Ա-ի (744—726) մի արձանագրից մենք իմանում ենք որ Ուրարտացւոց թագաւորը՝ Սարգուր Բ-ի՝ դաշնակցութիւն է կազմում Տաակլագի գէմ հետևեալ

գրացի իշխաններից, Մատիկիլ՝ Ազուջալի որդի, Սուլամայ Միլիդացի, Տարխուղար Գամգումացի և Կուստասպի Կումուխցի: Տակլաղը աճապարաւմ է պատժել դաշնակիցներին: Ճակատամարտը լինում է Կումուխում՝ կաստանա և Խալպումոտ և, անշուշտ, գոշնակիցները ջարդվում են, Սարդուրի խոլս է տալի գեղի լեռները: Թագաւորը հալածում է նրան, 72,970 հոգի գերի առնում և գրաւում նրա մալրաքաղաքը, Տուրուսպա, որտեղ կառուցանում է իր պատկերը: Արանից լեռու քարուքանդ է անում Ուրարտու Հողերի մինչև 70 կասպու (450) անգղիական միլ) և փախցնում Սարդուրուն մինչև Եփրատ գետը, նրա թագաւորութեան սահմանագլուխը: Ըստ ալամ լափշտակում է նա Սարդուրու ամեն ինչ արքայաշան զարդարանքը, նրա կառքերը, ձիերը, ջորիները և այլն: Ուլուբա գաւառում Տակլաղ հիմնում է Սոսուր-Բազա քաղաքը և գաղթեցնում Հալաստանի լեռները ուրիշ նուաճեալ գաւառների բնակիչներին... Այս ամենը պատահել է 742 թւին, եւ եթէ այս արձանագըի պատմածը ճշմարիտ իրողութիւն է, այն ժամանակ իրաւացի է անուանած ժամանակադրութեան ցուցակում այս արշաւանքը—«Ուրարտացւոց զօրքերի կոտորումն»: Զիարդ և իցէ, այս արշաւանքը վըճռողական հետեանք չէ ունեցել, որովհետեւ 734 թուականին Տակլաղ կրկին արշաւում է Ուրարտում, բայց շատ ցաւլի է, որ այս արշաւանքի մանրամասնութիւններից մեզ ոչինչ լայտնի չէ:

Այսուղ առ ժամանակ կտրում ենք մեր խօսքը և գառնում հետեւալ հարցին. Ենչ ազգ էին Ուրարտու բնակիչները: Այս հարցի նկատմամբ այլ գիտնականների հայեացքների հետ մեր ընթերցողները ծանօթ են: Իսկ այսուղ կը ծանօթացնենք ընթերցողին Ք. Պ. Պատկանեանի խորհրդածութեանց հետ այս ինդրի վերաբերութեամբ:—Այս գիտնականները (Լենորման, Բառլիսոն և այլք), ասում է նա,—

սգում են թէ՝ Հայերը, որք լալտնվում են պատմութիւ-
ում Քրիստոսից առաջ VI դարում, ասորեստանցիների աշ-
արհակալութեան ժամանակ՝ չը կալին Հայաստանում, Ուրիշ
ոսքով՝ Ուրարտուցիները և Հայերը մի և նոյն ազգը չեին,
ալս երկու ազգերը բնակվում էին Հայաստանում զանա-
ան ժամանակներում: Ենթագրենք, որ այդ մի իրողութիւն
իրաւ, այն ժամանակ մենք իրաւունք կունենանք հարցնե-
ու, Հայերը Երբ եկան և փոխանակեցին Հայաստանում Ու-
արտուցիներին: Մենք գիտենք VII դարի կեսում, Ասուր-
անիմալի ժամանակ, աւրարտուցիները աշեղ ոյժ էին կազ-
ում և որպնց ասորեստանցիները գեռ չեին նուաճել: Որա-
ից յիտ Ասորեստանը շուտով ընկնում է Մեղաց և Մաննու-
Ուրարտուցիները) Հարուածներից... Նոյն իսկ նիմուշի ընկ-
ելու ժամանակ հանդէս է զալի Ասորեստանի ազգ նոյն-
ան կործանիչ Ասորեստանի, ինչքան նաև Մարաց երկրի
ամար. մեր խօսքը Կիակասրի թագաւորութեան ժամանակ
կիւթացւոց կամ Սագաց արշաւոնքների վրա է: Որպնք
արճ ժամանակ միայն մնացին առաջաւոր Ասիալում, թող-
ելով իրանց յետելից աւերժանց և հրդեշների շաւիղը: Ահա
յն բարեն, երբ Հայաստանի հաղի վրա երևան կարսղ էին
ալ Հայերը, եթէ նրանք Հայաստանի քնիկ—կամ գսնեա—հին
նակիչներ չեին: Այն ժամանակ Հարկաւոր է ենթագրել թէ՝
ալերը Ակիւթացւոց մի մասն էին կազմում և թէ այդ մա-
ս մնաց նուաճեալ երկրում, կամ թէ Հայերը մի առանձին
եղ էին, որք ուղեկցում էին սկիւթացիներին նրանց ար-
աւանքներում և որպնք մնում են Հայաստանում և էլ չեն
հետեւում նրանց: Այս երկու իսկ ենթագրութիւնն էլ Հակա-
ռաթիւններ են այն ժամանակուայ պատմութեանը: Բայց
թէ ալս բարեն չէ Հայոց գոլստեան ժամանակը, իսկ որ-
ովից և Երբ եկան նրանք, Երբ կարողացան նրանք նուա-
ճել այդ լայնաստարած երկիրը, Երբ կարողացան անհետաց-

նել այն ուժեղ և քաջամարտիկ ազգը — ուրարտուցիներին — որ դարերի ընթացքում այնքան ընդդիմութիւն են ցոյց տու այնպիսի աշխարհակալներին, ինչպէս ասորեստանցիներն էին Մամբերենք ևս այն, որ Հայաստանի սահմանում, նոյն իս այդ ժամանակ, Մարաց թագաւորութեան կազմակերպութեան շրջանն էր: Միթէ կարելի է մտածել, որ հենց այդ ժամանակ մի ուրիշ աշխարհակալ ազգ առնում է Հայաստան առաջ մի որ և է ընդհարումի Մարաց երկրի հետ, և ընդհակառակն օգնում է նրան նրա ունեցած՝ բախման մէ Ասորեստանի հետ, որի հիւսիսային գաւառները լարակցու է իր երկրին և ինքը առանց մի որ և է ընդդիմութեան ասորագրվում նրան: Ասորեստանի թագաւորների արձան գրութիւններում, որոնք ուշի ուշով միշտ նկատում են առաջնութեան անցքը, ինչ որ կատարվում էր հիւսիսում, — մենց չենք դտնում մի որ և է ակնարկութիւն անզամ այս տեսչանգամանքի վրա..., Շատ ընական է, որ ոչ Հերոդոտու ոչ մի այլ պատմաբան չեն իմացել ոչինչ այս խոշոր լեզուի փոխութեան վրա առաջաւոր Ասիայում... Եւ շատ պարզ որա պատճեռը, — վասն զի երբէք այդ տեսակ լեզափոխութիւն չէ եղած ալստեղ,... Կան հիմունքներ, ըատ որում պատի ընդունել Ուրարտուցիների և Հայերի նոյնութիւնը: Այս հիմունքներից աւելի ծանրակշիռը մենք գտնում ենք դաձեալ Ասորեստանեալց արձանագրութիւններում, որք վերը բերում են միայն աւելի տնագանեղ ժամանակաշրջանին: Յայտնի է, որ աքամենիգերի արձանագրութիւնները ըստ մեծ մասին գրված են երեք լեզուներով՝ հին-պարսից, Ակիւթաց և կամ Մեդաց և Ասորեստանեալց: Դարեհ Հիստասպի արձանագրութիւններում երկու առաջին լեզուներով հայանունը դրած է այնպէս, ինչպէս և այժմս էլ պատահում Արմինա, Armina, Arminia, Arminiyara, մինչդեռ երրորդում, ասինքն ասորեստանական թարգմանութիւնում՝ դրած է Ու-

րաստու, հինաւուրց Աւրարտուի թեթև ձեափոխութեամբ Արանից երևում է, որ աքամենիդների ժամանակուայ ասորեստանցիները շարունակում էին անուանել Հայաստանի բնտկիչներին այնպէս, ինչպէս իրանց նախնիքը, և թէ այն ազգը, որ կոչվում էր Արմէն Միդաց ժամանակիներում, ասորեստանցիների համար նոյն ուրարտուցիներն էին, ինչ որ էին նրանց համար աւելի հնագոյն ժամանակիներում:

Զը նաև լով այն ամեն բացարութեանցս, ասում է պրօֆէոր Պատկանեանը, — ես այս լոգուածումս Հայաստանի հինաւուրց բնակիչներին — ուրարտուցիներ — անունն եմ տալի և ոչ հայ անուն... Եւ ալդ այն պատճառաւ չէ, որ ես կառկածանք ունենալի նրանց նոյնութեան վրա — ոչ, այլն պատճառով, որ չը կայ մի որ և է զրական տեղեկութիւն՝ թէ հայոց պատմական անունը ժամանակակից լինէր Ասորեստանեալց Ուրարտունու Հայ (Արմէն) անուն, որպէս համագութին անուն, նշանակուած ամբողջ հայոց ցեղերի կոչման համար, կարող էր ծագել աւելի ուշ ժամանակիներում:

Սարգօն (721—704) աւելի բուռն յարձակումներ է անում Հայաստանի վրա քան իր նախորդները: Սա վճռաբար մտքին գնում է միանգամայն ստրկացնել Հայաստանը և այս նպատակով ձեռնամուխ է լինում Հայոց գաղթականութեանը օտար երկիրներ, բնակեցնելով նրանց քանդ ու աւերակ դարձրած տեղերում հեռի գաւառների օտար ընակիչներին: Ուրարտուցիները իրանց կողմանէ չէին լուսահատվում և քաջութեամբ տանում էին ստացած հարուածները, ոոր ի նորու լոտին կանգնելով... Այս երկար պատերազմերը վճռողական հետեւանք չեն ունեցել... Եւ ինքը, Սարգօն, կարծես խոստավանում է այս մասին, խօսելով իր արձանադրերում ոչ թէ Ուրարտուցիների նուաճման վրա, այլ նրանց հետ ունեցած պատերազմերի վրա միայն: «....Ես ստորագրեցի Ասորեստանին Խիստի գաւառը, ես պատերազմեր

եմ ունեցել Ուրարտում, ևս աւերակ դարձրի Մուսա
սիր, նուածեցի Անդիան և այլն Սարգօնի տասն և հին
արշաւանքներից հինգը ուղղած է եղել Ուրարտոյ դէմ, որ
թագաւորը՝ Ուրզա անհաշտ ախոյեան է հանդիսանում նրան

719 Թիւն էր Սունդախու և Գուրդուկիու քաղաքներ
ապստամբվում են՝ Ասորեստանին Հաւատարիմ Վանալ պա-
լազատողի—Իրանզու դէմ, և Զիկիրտու իշխանի՝ Միտտատի
օգնութեամբ մտադիր են լինում անջատուել Ասորեստանից
Նորն իսկ ալդ ժամանակ Սուկիալ, Բանա, Պասզա, Արիտիկն-
քաղաքները մտնում են Ուրարտու թագաւորի՝ Ուրզայի իշ-
խանութեան տակ: Սարգոն աճապարում է պատժել սրան-
այսպիսի գաւաճանութեան համար: Նա պատժում է ոչ մի
այն զլսաւոր խռովարաններին, այլ նաև քանդում է այ-
քաղաքները և նրանց բնակիչներին զաղթեցնում ասորե-
և փիւնիկեցւոց երկիրները: Սրանցից լետոյ անցնում է երե-
տարի: Սարգոն զբաղած է լինում իր թագաւորութեան հա-
րաւալին սահմաններում, երբ Ուրզա մի մեծ զաշնակցութիւ-
է կազմում նրա դէմ. սա քարշում է տռ ընդհանուր գո-
ծը Միլիդեան իշխանին՝ Բազարատուն,—նաև Կարալլա Զ/
կիրտու և Վանալ իշխանութեանց սլայազատողներին: Դա-
նակիցները բռնում են ասորեստանցիներին Հաւատարիմ Վա-
նայ պարագատողին, Իրանզու որդուն, Ազուին և լեռներու
սպանում, իսկ վանալ իշխանութիւնը լանձնում են նր-
եղբօրը, Ուլլուսունին: Այս համբաւը համնում է Սարգոնի
ականջին: Յա արագութեամբ դառնում է Վան, ջարդում
գաշնակիցներին, մորթեզերծ է անում Բազարատուն, իս-
ուլլուսունի վերաբերմամբ ողորմած է դանդում և նրա եղ-
բօր աթոռութողնում է նրան: Այնու ամենայնիւ Ուրզայ/
լարած գաշնակցութիւնը ոչ միայն չէ քանդվում, այլ նա-
նոր ոլժ է ստանում, երբ մտնում է ի թիւս գաշնակիցներ
Ալլարուր գաւառի իշխանը ևս Նուտով Ուլլուսունն է:

անցնում է գարձեալ ալս կողմը: Սարգոն, որ գտնվում էր ալս ժամանակ Վանալ լճի շրջակալքում, աւերում է Ուլլուսունի իշխանութիւնը և կրակի ճարակ անում նրա մայրաքաղաքը՝ Իզիրտուն և ուրիշ մի քանի ևս քաղաքներ: Բայց զարմանալին այն է, որ Սարգոն դարձեալ ողորմում է Ուլլուսունին և միայն աւելցնում է նրա վրա գրած հարկը: Իսկ Ալլաբուրեան իշխանին նրա ընտանիքով և մասամբ բնակիչներին գաղթեցնում է Ասորիք:

Հազիւ թէ վերջ է դնում ալստեղ ապստամբութեանը, թագաւորը աճապարում է Ատրազատական... Ուրզա իսկոյն օգուտ է քաղում Սարգոնի ալս բացակայութիւնից. Կրկին միաւորվում է Ուլլուսունի հետ, քարշում է իր կողմը Դալառկուն, որին Ասորեստանցիները նշանակել էին Վանայ կառավարիչ: (Ասորեստանցիները սովորութիւն ունեին նուաճեալ երկրում թողնել նրանց իշխանին, բայց մի և նպան ժամանակ դնում էին նրա մօտ իրանց ներկարացուցչին, որպէս քաղաքական զեկավար): Սարգոն դարձեալ աճապարում է գէպի հիւսիս, առնում է ալստեղ 32 ամրոցներ, որոնք տուած էին Ուլլուսունից Ուրզին, Դալառկուն գերի տանում: Բայց Ուրզա չէ դադարում, նա կրկին նոր դարան է լարում Սարգոնի գէմ: Սարգոն ալս պատճառով արշաւում է Զիկիրտու զաւառում (Ատրազատականում) Ուրզայի նոր դաշնակից՝ իշխան Միտատի վրա, կրակ է տալի Պարգուն, իշխանութեան մայրաքաղաքը, առնում է ուրիշ երեք քաղաք ևս ու 24 դղեակներ: Միտատին խոլս է տալի և անհամբաւ անհետանում: Այնուհետև Սարգոն պատահում է Ուրզայի հետ, Չարգում է սրա զօրքը և սրա ընտանիքից 250 գերի առնում: Ուրզա փախչում է գէպի լեռները և ոլնտեղ մօտ ութ ամիս թափառաշրջում: Նրա երկիրներից ի մասը, որ Վանայ իշխանութեան կից էր, Սարգոն տալիս Ուլլուսունին, որը անսպառում հնարքներով միշտ ողոր-

մուլթիւն է գանում Սարգոնի հոգում։ Իսկ Որմիալի շրջակալքում գտնուած Ռւրզայի երկրները քանդում ու տւերում է։ Այս ամենը կատարելուց յետ նա գալիս է և մտնում Մուսասիր գաւառը (Վանալ լճի հիւսիսալին ծովեղբում), որի իշխանը այն ժամանակ Ռւրզանան էր, մեզ յայնի Ռւրզայի, Ռւրարաւոյ թագաւորի ենթագրեալ կալուածատէրերից տմենագօրեղը։ Մուսասիր քաղաքումն էին գտնվում Ռւրարաւոցիների բարձրագոյն սրբութիւնները՝ Հալդի աստուածը (թէ աստուածուհին)։ Ռւրզանան խոյս է տալի դէպի լեռները, թողնելով իր մալրաքաղաքը թշնամու ինքնավար հաճոյքին։ Սարգոն առնում է Մուսասիրը, գրաւում է Ռւրզանալի գանձերը, նրա կանանցը ու երեխերքին, առնում է 8160 գերիներ, մեծ քանակութեամբ էշեր և այլ կենդանիներ։ Բնակիչների վրա ոսկու, արծաթի և այլ մետաղների մեծ հարկ է դրվում։ Նոյն իսկ այդ ժամանակի թագաւորը տանում է իր հետ Ասորեստան Ռւրարտուցիների աստուածներին—Հալդի և Բահապարառւ (կամ Բահամազդու)։

Միշտ ժիր ու արիասիրտ Ռւրզա, լսելով իրանց աստուածների գերի գնալը, այս անգամ յուսահատութեան մէջ իր սրով ինքն իրան հարկանում է ու սպանում։ Սարգոն, իր պատերազմական բաջողութիւններին վերազրելով Ռւրզայի մահը, ամեն մի պատեհ առիթ ունեցած հանգամանքներում զանազան արձանագրերում մտաբերում է ալդ իրօղութիւնը.. Ռւրզայի գաշնակիցները նրա մահից յետ չեն կորցնում իրանց քաղաքութիւնը և յառաջ են տանում նրա ձեռնարկած գործը։


Այս պատերազմերը, ինչպէս տեսանք, կատարուել են Ասորեստանի հիւսիսում և հիւսիսալին արևելքում։ Անխոնչ Ռւրզան ոչ փոքր հոգս է պատճառել Սարգոնին նոյնպէս հիւսիսալին արևմաեան գաւառներում։ Խամանում—Միլիդու քաղաքով հանգերձ, Կարկամիշում, Մուսկում, Թարալում,

Խիլակիում և Գամգումում։ Այս պատերազմերի մանրամասնութինները ես բաց եմ թողնում, նկատելով որ միշտ Ուրարտուցիններն են եղել շարժառիթ այս պատերազմերի, որոնց մէջ պատահում ենք Ուրարտույ մի թագաւորի անունի Հետ Արդիստեսի Հետ՝ և այս պատերազմը վերաբերում է 708 թութին...

Այսպէս Ասորեստանցինների բացարձակ թշնամական ընդհարումները Ուրարտույ Հետ ոչ մի վճռողական հետեւանք չե ունենում և Սարգոնի յաջորդները, ինչպէս երեսում է, թողնում են Հիւսիսային Հայաստանի նուաճելու միտքը... Յայտնի Սենաքերիրը (704—680) բաւականանում է միայն Հիւսիսային Հայաստանին կից գաւառներում կարգադրել տալ մշտական նկատողութիւն այն շարժողութեանց և եղելութեանց վրա, որ տեղի են ունեցել Ուրարտում։ Իսկ նրա յաջորդ, Ասուր-պքի-իդինի՝ (680—669) Աստուածաշնչի Ասսարհագոնի, արձանագրերում մենք ոչինչ չենք գտնում վերաբերեալ Հայաստանին։ Ասուրբանիպալ (669—627) հէնց միայն մի յաղթանակակիր արշաւանքի վրա է խօսում Վանի վրա, որի իշխանը այն ժամանակ Ախսերան է եղել... Հետեւալ արձանագիրը ակներև ցոյց է տալի թէ՝ Ուրարտուցինները իրանց քաջութիւններով Ասորեստանցինների աչքում վերջի վերջու ինչ պատւոյ և յարգանաց են արժանանում և թէ Ասուրբանիպալ ինչ ընդունելութիւն է անում Ուրարտույ ներկայացուցիչներին... Ասուրբանիպալեան արքունիքի մի զատի վրա ի միջի այլ պատկերների նկարագրված է թագաւորը, որը կառքի մէջ նստած՝ դեսպաններ է ընդունում։ Այս պատկերը ունի Հետեւալ գլխագիրը. «Ես Ասուրբանիպալն եմ Ասորեստանի թագաւորը։ Ուրարտույ թագաւորի, Ուրզալի, աւագանինները եկան ինձ մօտ բարեկամութիւն սնդրելու։ Ելամների աւագանիններին՝ Նաբուգամիկին և Ումբադարին՝ շղթալակապ նրանց առաջին կանգնացը»։ Նրանց

Ներկայութեամբ ես հրամայեցի լեզուները կտրել և մորթեցերծ անել Մանու — կի — ախին և Նինիս — ուզալլին։ Արանից էլ մեծ պատիւ չէր կարող անել Ասուբբանիպալը իր հիւրերին...

Այս արձանագրով վերջանում է Ասորեստանի ամենալինչ լարաբերութիւնները հինաւուրց Հայաստանի հետ։



1
2
3
4
5
6
7

